


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ –  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

“Հաստատում էմ”

ՀՀ Առողջապահության նախարարի տեղակալ

  
S. Սահակյան  
10. ցեկտեմբեր 2013թ.

ՍՈՒՐ ԹՈՔԱԲՈՐԲԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ

Մեթոդական ձեռնարկ

Երևան

2013

## «Սուր թոքաբորբը մանկական հասակում»: Մեթոդական ձեռնարկ:

Ձեռնարկը նվիրված է երեխաների առողջության կարևորագույն խնդիրների թվին պատկանող՝ սուր թոքաբորբի ախտորոշման և բուժման հարցերին: Այն չի փոխարինում առկա ՀՀ ԱՆ կողմից հաստատված ուղեցույցները, այլ կոչված է լրացնելու բժիշկների գիտելիքները, ներկայացնելու արդի մոտեցումները հիվանդության էթիոլոգիայի, պաթոգենեզի, լաբորատոր հետազոտությունների իրականացման և բուժման վերաբերյալ: Վերաբերում է 2 ամսականից մինչև 18 տարեկան երեխաների տանը զարգացած սուր թոքաբորբերի հիվանդանոցում վարման դեպքերին: Նախատեսվում է առաջին հերթին հիվանդանոցային մակարդակում գործող մանկաբույժների, ինչպես նաև տվյալ մակարդակում գործող այլ մասնագետների, կլինիկական օրդինատորների համար:

### Հեղինակ՝

- Մերգեյ Սարգսյան, Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 2 ամբիոնի դոցենտ, «Արաբկիր» Բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի թոքաբանական բաժանմունքի խորհրդատու:

Երաշխավորվել է տպագրության «Արաբկիր» Բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

Երաշխավորվել է տպագրության «Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի» կողմից:

### Գրախոսներ՝

- Միքայել Նարիմանյան, բ.գ.դ., պրոֆ., Երևանի պետական բժշկական համալսարանի Ընտանեկան բժշկության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԱՆ գլխավոր թերապևտ:
- Աշոտ Սարգսյան, բ.գ.դ., պրոֆ., Երևանի պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 2 ամբիոնի վարիչ:
- Նունե Բաղդասարյան, բ.գ.դ., Երևանի պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչի պաշտոնակատար:
- Անահիտ Պետրոսյան, բ.գ.թ., Երևանի պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 2 ամբիոնի դոցենտ

Մեթոդական ձեռնարկը հրատարակվում է ՀՀ առողջապահության նախարարության պատվերով:

Տպաքանակը՝ 500 օրինակ

## ■ Մահմանում

Մուր թոքաբորբը ինֆեկցիոն ծագման հիվանդություն է, որի ժամանակ տեղի է ունենում թոքերի հյուսվածքի, ինտերստիցիումի ինֆիլտրացիա, էքսուդատի կուտակում ավելուներում և որպես պատասխան՝ շնչառական անբավարարության և օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայի զարգացում: Համաձայն Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգման, թոքաբորբը դասվում է J18՝ այն դեպքերում, երբ հարուցիչը ճշտված չէ, հարուցչի ճշտման դեպքում դասիչը համապատասխանաբար փոխվում է:

Ընդունված է անվանել թոքաբորբը “տանը ձեռքբերած” (community acquired pneumonia, “домашняя пневмония”), եթե այն զարգացել է տանը, հիվանդանոց ընդունվելուց հետո մինչև 72 ժամ ընկած ժամանակահատվածում կամ հիվանդանոցից դուրս գրվելուց 72 ժամից հետո: Հիվանդանոցում՝ ընդունվելուց 72 –րդ ժամից հետո զարգացած կամ դուրս գրվելուց հետո մինչև 72 –րդ ժամը զարգացած թոքաբորբերը գնահատվում են որպես “հիվանդանոցային”: “Մուր” հասկացությունը Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից պայմանականորեն ընդունված է կիրառել այն դեպքերում, երբ հիվանդությունը տևում է ոչ ավել, քան 30 օր [WHO,1993]: Այլ դասակարգումներում՝ իբրև “ձգձգվող” կամ “դանդաղ լուծվող” (slowly resolving) գնահատվում են այն թոքաբորբերը, որոնք կլինիկորեն կամ ռենտգենաբանորեն չեն ավարտվում 4 –ից - 6 շաբաթներում [Баранов, 2009; Nelson, 2011]:

## ■ Թոքերի առանձնահատկությունները մանկական հասակում


Մանկական հասակում թոքերի բորբոքային հիվանդությունների ծագումնաբանությունը, ախտածնությունը և ընթացքը առավել ճշգրիտ հասկանալու և համարժեք գործողություններ ծավալելու համար շատ կարևոր է դրանց տարիքային առանձնահատկությունների իմացությունը:

Երեխաների թոքերում ալվեոլների քանակը ավելի քիչ է, դրանց քանակը աստիճանաբար ավելանում է ծննդից հետո: Հատկապես ինտենսիվորեն ալվեոլներն ավելանում են կյանքի առաջին երկու տարվա ընթացքում: Թվաքանակի ավելացումն ավարտվում է շուրջ 8 տարեկան հասակում, այնուհետ փոփոխվում են միայն դրանց չափերը: Ալվեոլների չափերը շուրջ 4 անգամ ավելի փոքր են քան մեծերինը, ինչը որոշակիորեն համապատասխանում է մարմնի ընդհանուր համամասնություններին: Թոքերի էլաստիկ հյուսվածքը թույլ է զարգացած և փոփոխվում է միայն դեռահասության տարիքում:

Իր ուրույն առանձնահատկություններն ունի կրծքային հասակի երեխաների թոքերի արյունատար համակարգը: Ինչպես և մեծերի մոտ, առկա են 2 տեսակի մազանոթներ` լայն, մինչև 300 մկմ և նեղ` 8-10 մկմ: Մանր զարկերակների պատերը բարակ են, լուսանցքները` նեղ, ինչը աստիճանաբար փոփոխվում է կյանքի առաջին տարվա ընթացքում: Ընդհանուր առմամբ, երեխաների թոքերն ավելի "արյունատար են" և քիչ "օդատար": Սա մասամբ պայմանավորվում է հարաբերական ավելի առատ արյունամատակարարմամբ: Նման առանձնահատկությունն այս կամ այն աստիճանի չափով ազդում է թոքերի ֆունկցիոնալ հատկությունների վրա: Դրան է նպաստում նաև կրծքավանդակի տակառաձև լինելը:

Սեզմենտային կառուցվածքը նման է այդպիսինին մեծահասակների մոտ: Սակայն երեխաների թոքերի տարբեր հատվածներ տարբեր են ենթարկվում օդափոխման: Հատկապես դա արտահայտվում է կրծքային հասակում, ինչի արդյունքում վաղ հասակի երեխաների մոտ հարաբերականորեն ավելի հաճախ ախտահարվում են թոքերի հարողնաշարային սեզմենտները` 2-ը, 6-ը, 10-ը:

## Նկար 1. Թոքերի սեգմենտային կառուցվածքը



Թոքերի ֆունկցիոնալ առանձնահատկությունները պայմանավորվում են մի քանի գործոններով: Ացինուսների թիվը պակաս է: Շնչառական ծավալներն ավելի փոքր են, ընդհանուր առմամբ շնչառությունն ավելի մակերեսային է, պաթոլոգիաների դեպքում ռեգերվային կարողությունները ցածր են: Կրծքավանդակի ձևը ևս թույլ չի տալիս կատարել լրացուցիչ ներքաշումներ: Շնչառությունն ունի գերազանցապես դիաֆրագմալ բնույթ: Դրա արդյունքում շնչառության խորությունը մասամբ կախված է որովայնի խոռոչում առկա ճնշումից: Բացի դրանից, վաղ հասակի երեխան ավելի շատ է քնում, ինչը կանխորոշում է միջկողային մկանների հարաբերականորեն ավելի ցածր շարժունակությունը և մասնակցությունը շնչառական ակտին: Աղջիկների մոտ 7 տարեկան հասակից սկսում է ձևավորվել մեծահասակ կանանց բնորոշ շնչառության կրծքային ձևը:

Շնչառության հաճախականությունը նորածնի մոտ հանգիստ վիճակում տատանվում է 40-ից մինչև 60 մեկ րոպեում, այն անկանոն է, արագացումը մերթ ընդ մերթ փոխարինվում է դանդաղացումով և նույնիսկ կարճատև ապնոէներով: Հանգիստ վիճակում մինչև մեկ տարեկան երեխայի շնչառության հաճախականությունը կազմում է 30-35 մեկ րոպեում, 5 տարեկանինը՝ մոտ 25, 10 տարեկանինը՝ 20, 14-18 տարեկանինը՝ 16-20: Պուլսի և շնչառության հաճախականության

հարաբերակցությունը կազմում է նորածնի մոտ 1:2-3, այնուհետ 1 տարեկան երեխայի մոտ՝ 1:3-4, իսկ մեծերի մոտ՝ 1:4-5:

Յուրաքանչյուր շնչառական ակտի ժամանակ թթվածնի տարբերությունը ներշնչված և արտաշնչված օդում կազմում է՝ 4% մեծահասակների և 2% երեխաների մոտ: Սակայն ֆետալ հեմոգլոբինի, ինչպես նաև որոշ այլ առանձնահատկությունների հաշվին, երեխաների հյուսվածքներն ունեն ավելի բարձր հակում կապել հեմոգլոբինը: Հիպօքսեմիայի ժամանակ երեխաների մոտ նորից կարող է արտադրվել ֆետալ հեմոգլոբին: Բարձր պլաստիկ փոխանակության պայմաններում, հյուսվածքային շնչառությունն ընթանում է ավելի ինտենսիվ: Ֆիլոգենեզի տեսակետից գլիկոլիզի առավել հին տարբերակը՝ անաէրոբը, երեխաների մոտ առավել մեծ տեղ է գրավում, ինչը հիպոքսիայի դեպքում բերում է լակտատների և պիրուվատների ավելի վաղ կուտակմանը, և, որպես արդյունք՝ թթվահիմնային հավասարակշռության շեղմանը դեպի ացիդոզ: Կարբոանհիդրազայի ակտիվությունը ավելի ցածր է, ինչի հետևանքով հիպերկապնիան զարգանում է ավելի արագ: Անբավարարության դեպքում կյանքի առաջին ամիսներին երեխաների օրգանիզմը չի կարող պատասխանել հիպերվենտիլյացիայով, այլ կարող է նաև ընկճվել և առաջացնել բրադիպնոէ:

Երեխաների, ինչպես նաև մեծահասակների մոտ թոքերի պաշտպանական հատկությունները ներկայացված են հետևյալ գործոններով. ավելոլար մակրոֆագեր, սեկրետոր իմունոգլոբուլիններ, լիզոցիմ, լակտոֆերին, ինտերֆերոն և այլն:

Արտաքին շնչառության ֆունկցիայի մանկական հասակի հիմնական առանձնահատկություններից են՝

- Թոքերի կենսական տարողությունը (Vc, vital capacity) ավելի ցածր է:
- Ներշնչման ռեզերվային ծավալը (IRV, inspiration reserve volume) ավելի ցածր է:
- Արտաշնչման ռեզերվային ծավալ (ERV, expiration reserve volume) ավելի ցածր է:

- Ուժեղացված արտաշնչման ծավալ (FEV, forced expiration volume) ծագր է:
- Մաքսիմալ օդափոխություն (V m, ventilation maximal) էապես ցածր է:

Նշված առանձնահատկություններն առողջ երեխայի մոտ չունեն որևէ գործնական նշանակություն, սակայն կարևոր են երեխաների շնչառական հիվանդությունների կլինիկական առանձնահատկությունները հասկանալու համար [Рачинский, Таточенко, 1987; Баранов, 2009; Nelson, 2011]:

## ■ Համաճարակաբանություն

Ըստ ԱՀԿ գնահատականների, սուր շնչառական ինֆեկցիաները (ՄՇԻ), գլխավորապես՝ թոքաբորբը, յուրաքանչյուր տարի վաղ հասակի երեխաների շրջանում առաջացնում են շուրջ 1.5 միլիոն մահվան դեպք, ինչը կազմում է մանկական մահացության 13% -ը [Black et al, 2008]: Տարվա ընթացքում աշխարհում գրանցվում է երեխաների սուր թոքաբորբի 150 միլիոն նոր դեպք, որոնցից 7-13% պահանջում են հոսպիտալացում:

Հաճախականության ինտենսիվ ցուցանիշը աշխարհում կազմում է տարեկան 0.26 դրվագ / մեկ երեխայի հաշվարկով, այսինքն վաղ տարիքի 4 երեխաներից առնվազն մեկը տարվա ընթացքում հիվանդանում է թոքաբորբով: Սակայն նշված դեպքերի 95% տեղի է ունենում զարգացող երկրներում՝ ցուցանիշը այստեղ կազմում է 0.29 / մեկ երեխայի հաշվով: Զարգացած աշխարհում այն ավելի ցածր է, կազմելով ընդամենը 0.03: ԱՊՀ և Արևելյան Եվրոպական երկրների համար այն գնահատվում է 0.09 [WHO, UNICEF, 2006; Rudan et al, 2003]:

Զարգացած երկրներում իրականացված համաճարակաբանական հետազոտությունները բացահայտեցին հետևյալ պատկերը. 90-ականներին “տնային” թոքաբորբի տարեկան հաճախականությունը Եվրոպայում գնահատվում էր միջինը 30 – 40 / 1000–ին՝ մինչև 5

տարեկան տարիքային խմբում և 15 - 20 / 1000 երեխայի հաշվով՝ 5-10 տարեկանների շրջանում [Murphy et al, 1991; Jokinen et al, 2003]: Հիվանդանոցային գրանցման տվյալների համաձայն, սուր թոքաբորբի հաճախականությունը Նորվեգիայում կազմել է 14.7 / 10,000 -ի նկատմամբ 0-16 տարեկանների շրջանում, 32.8՝ 0-5 տարեկանների շրջանում և 42.1՝ 0-2 տարեկանների շրջանում [Senstad et al, 2009]: Մեծ Բրիտանիայում իրականացված հետազոտությունների տվյալները մոտավորապես նույնն են [Clark et al, 2007]: Գերմանիայում մի ուսումնասիրություն, որը ներառել է նաև արտահիվանդանոցային մակարդակում գրանցված դեպքերը, ցույց է տվել հաճախականությունը 181.1 / 10,000-ի նկատմամբ՝ 0-1 տարիքային խմբում և 150.5 / 10,000՝ 0-5 տարիքային խմբում [Weigl et al, 2005]:

ԱՄՆ-ում զրոյական թվականներին յուրաքանչյուր տարի գրանցվում է շուրջ 3 մլն թոքաբորբի արտահիվանդանոցային դեպք, 150 000 հիվանդ երեխա հոսպիտալացվում են, իսկ հոսպիտալացված դեպքերի շուրջ 15% -ի մոտ նկատվում են թոքաբորբի բարդություններ, օրինակ՝ էմպիեմա [Lee et al, 2010; Kronman et al, 2011; Shah et al 2010, 2011]: Ամբուլատոր դեպքերի հաճախականության գնահատումը ցույց է տվել, որ տնային պայմաններում զարգացած թոքաբորբի հաճախականությունը տատանվում է 17 – 23 / 1000 մանկական բնակչության հաշվով և դա չի փոփոխվել 1994 – 2007 թթ. ընթացքում, [Kronman et al, 2011]: Ըստ նույն հեղինակների, թոքաբորբի հաճախականությունը ամենաբարձրն է 1 - 5 տարիքային խմբում:

Զարգացած երկներում թոքաբորբի հիմնական պատճառ հանդիսացող պնևմոկոկի դեմ PCV7 պատվաստման ներմուծումը բերել է հիվանդացության և հոսպիտալացումների թվի որոշակի կրճատմանը: Մասնավորապես, Մեծ Բրիտանիայում հոսպիտալացումների թիվը կրճատվել է 19% -ով պատվաստման ներմուծմանը հաջորդած երկու տարվա ընթացքում [Koshy et al, 2009]: Միևնույն ժամանակ, 1997 – 2006 տարիների շարժընթացի գնահատականը ցույց է տվել, որ ԱՄՆ-ում պնևմոկոկային պատվաստման ներմուծման պայմաններում թոքաբորբի պատճառով հոսպիտալացումների, այն է՝ հարաբերականորեն ծանր ընթացք ունեցող թոքաբորբերի մակարդակը մնում է գլխավորապես



անփոփոխ: Նկատվել է թոքաբորբի արտաթոքային բարդությունների հաճախականության նվազում 36%-ով, մինչդեռ թոքերի տեղային բարդությունների քանակն ավելացել է 78%-ով, հատկապես 1-5 տարիքային խմբում [Lee et al, 2010]:

Ռուսաստանում հաճախականության ցուցանիշները մոտ են եվրոպականին և 0 - 5 տարեկան տարիքային խմբում կազմել են շուրջ 40 / 1000 երեխայի հաշվով [Таточенко, 2010]:

Չնայած հիվանդացության հարաբերականորեն ցածր թվերին, նույնիսկ զարգացած երկրներում սուր թոքաբորբերը բերում են բավականին մեծ ծախսերի: Այսպես, Իտալիայում երեխաների թոքաբորբերի հիվանդանոցային բուժման արժեքը գնահատվում է 1066– 2553 Եվրո [Di Ciommo et al, 2002], Մեծ Բրիտանիայում` 2325 – 3513 բրիտանական ֆունտ [Melegaro et al, 2006]: Գերմանիայում իրականացված հետազոտության արդյունքում ցուցադրվել է արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժման արժեքների տարբերությունը` 85 Եվրո և 2306 Եվրո համապատասխանաբար [Ehiken et al, 2005]: Տվյալ հետազոտությունն ակնհայտորեն վկայում է արտահիվանդանոցային պայմաններում արդյունավետ բուժման տնտեսական առավելության օգտին: Նույնիսկ զարգացած երկրներում երեխայի մոտ սուր թոքաբորբի առկայությունն առաջացնում է ընտանիքի ուղղակի և անուղղակի ծախսեր, առօրյա գործունեության զգալի խանգարումներ [Shoham et al, 2005]: Ըստ սեփական հաշվարկների` վաղ հասակի երեխաների ՄՇԻ–ները, գլխավորապես թոքաբորբը պայմանավորում են բոլոր տարիքային խմբերի “անկարողությունը կանխորոշող կյանք-տարվա ցուցանիշի” (disability adjusted life-years, DALY index) շուրջ 5%-ը, ինչն ինքն իրեն ահռելի թիվ է:

Նշված տվյալները խոսում են գլոբալ մակարդակում խնդրի արդիականության մասին և թելադրում են թոքաբորբի վարման առավել արդյունավետ կլինիկական և տնտեսապես հիմնավորված բուժման մոտեցումների ներդրման անհրաժեշտությունը:

## **Թոքաբորբի զարգացման ռիսկի գործոնները**

Ներկայումս ապացուցված է մի շարք ռիսկի գործոնների ազդեցությունը թոքաբորբի հիվանդացության և մահացության վրա: Ապացուցվել է, որ հիվանդացությունն արական սեռի ներկայացուցիչների շրջանում 2 անգամ ավելի բարձր է: Հիվանդացությունն ավելի բարձր է վաղ տարիքում, ընդ որում ավելի բարձր է անհաս ծնվածների շրջանում [Clark et al, 2007]: Բացի բուն հասունությունից, նշանակություն ունեն ծնվելուց ցածր քաշը (< 2500 գ), ծնվելիս Աբգարի սանդղակի արժեքը՝ 8 -ից ցածր, ըստ կարգահամարի՝ երրորդ կամ ավելին կենդանի ծնունդը ընտանիքում [Singleton et al, 2009]: Վաղ տարիքում հիվանդացության ռիսկի գործոններ են հանդիսանում արհեստական սնուցումը, վիտամինների և միկրոնուտրիենտների պակասը: Դրանցից առավել կարևոր նշանակություն է տրվում վիտամին Ա-ին և ցինկին [WHO, 1995; Wubbel L, 1999]: Կրճքով սնուցումն ունի կարևոր պաշտպանիչ նշանակություն [WHO, UNICEF, 2006]: Միևնույն ժամանակ, զարգացած և զարգացող երկրներում գրանցվող թոքաբորբի մահացության ցուցանիշների մեծ տարբերությունը՝ կրճքով սնուցման ցուցանիշի նույնանման կամ մոտավորապես հավասար տարածվածության պայմաններում ակնհայտորեն խոսում է նաև այլ՝ սոցիալ-տնտեսական գործոնների մեծ նշանակության մասին:

Թոքաբորբի զարգացման և ելքի ռիսկի գործոններից են ընտանիքների սոցիալական բարեկեցության մակարդակը, խիտ բնակեցված պայմաններում ապրելը, բուժօգնության դիմելու գործելակերպը [Franco et al, 2004]: ԱՄՆ-ում վաղ տարիքում թոքաբորբով պայմանավորված մահացությունը կապվում է նաև այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են մայրերի կրթական մակարդակը (12 տարվանից պակաս կրթություն), մոր տարիքը (25 տարեկանից երիտասարդ), մոր կողմից ծխախոտի օգտագործումը հղիության ժամանակ, նախածննդյան հսկողության և խնամքի ուշ սկսելը՝ հղիության առաջին եռամսյակից ուշ [Singleton et al, 2009]:

Թոքաբորբի և այլ շնչառական հիվանդությունների ռիսկը բոլոր տարիքային խմբերում բարձրացնում են միջավայրային գործոնները, մասնավորապես՝ մթնոլորտի և ներտնային օդի աղտոտվածությունը:

Մեծ քաղաքներում հիվանդացության և մահացության ռիսկի գործոններից է մթնոլորտային օդի աղտոտվածությունը PM10 դասի մանրագույն մասնիկներով, ինչը, զուգակցված մի շարք այլ գործոնների հետ, հավաստիորեն ազդում է երեխաների մահացության վրա [WHO, 2005]: Ապացուցվել է, որ քաղաքներում նշված մասնիկների խտության տատանումները նպաստում են հիվանդացության ալիքաձև բարձրացմանը [Carbajal – Arojo et al, 2007]: Հայաստանում տվյալ կտրվածքով իրավիճակը անբարենպաստ է հատկապես Երևան քաղաքում, քանի որ, ըստ մթնոլորտի մոնիտորինգի տվյալների, նշված մասնիկների խտությունն օդում կազմում է շուրջ 45 գ/մ<sup>3</sup>, ինչն էապես գերազանցում է թույլատրելի ցուցանիշը: Համեմատության կարգով՝ միջին ցուցանիշը Եվրամիության քաղաքներում կազմում է 25 գ/մ<sup>3</sup> [World Bank, 2012; WHO, 2012]: Բացասական ազդեցություն ունի նաև ներսնային օդի աղտոտվածությունը, մասնավորապես ծխախոտի ծուխը: Որպես ռիսկի գործոն դիտարկվում է նաև անմիջապես տանը տեղադրված վառարանի առկայությունը: Նշված արտանետումները նպաստում են շնչուղիների էպիթելիալ բջիջների քայքայմանը և արտադրվող լորձի բակտերիցիդ հատկությունների իջեցմանը, ինչն էլ իր հերթին հեշտացնում է ինֆեկցիայի ներթափանցումը [WHO, 2005]: Թոքաբորբի հաճախականությունը որոշակիորեն փոփոխվում է տարբեր աշխարհագրական գոտիներում: Կլիմայական պայմանների որոշ ազդեցությունը ցուցադրվել է Հայաստանի օրինակով [Սարգսյան, 2008]:

Որպես հազվադեպ հանդիպող, յուրահատուկ ռիսկի գործոն է դիտարկվում գաստրոէոնոֆագալ ռեֆլյուքսով երեխաների մոտ թթվայնությունը ճնշող դեղամիջոցների կիրառումը: Ապացուցված է, որ հիստամինային ընկալիչների ինհիբիտորներով բուժումն առաջացնում է սուր թոքաբորբի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների զարգացման ռիսկի աճ [Canani et al, 2005]:

Թոքաբորբի ելքի վրա ազդող առավել կարևորագույն գործոն է որակյալ բուժօգնության մատչելիությունը: Մասնագիտացված անձնակազմի, թթվածնի, ախտորոշիչ սարքերի, համապատասխան դեղորայքի առկայությունը բուժհաստատություններում հանդիսանում է

թոքաբորբի արդյունավետ բուժման և մահացության կանխման կարևորագույն նախապայման [WHO, UNICEF, 2006]:

ԱՄՆ-ում մեկ նահանգի տարբեր շրջանների հոսպիտալացումների ինտենսիվ ցուցանիշի վերլուծությունը ցույց է տվել, որ բացարձակապես նույն՝ սոցիալական, աշխարհագրական և այլ պայմաններում գտնվող մանկական պոպուլյացիաներում երեխաների թոքաբորբով հոսպիտալացումների ցուցանիշը կարող է էապես տարբերվել, ինչն ակնհայտորեն խոսում է սուբյեկտիվ գործոնների՝ այս կամ այն տարածաշրջանում “ընդունված մոտեցումների” մասին [Gorton, Jones, 2006]:

### **Թոքաբորբի կանխարգելումը**

Թոքաբորբի կանխարգելման միակ եղանակն է ժամանակին կատարված պատվաստումը՝ հեմոֆիլային ցուպիկի, պնևմոկոկի, կարմրուկի և կապույտ հագի դեմ: Որպես կանխարգելիչ միջոց կարող է նաև դիտվել գրիպի վիրուսի դեմ սեզոնային պատվաստումը:

### **Խնդրի արդիականությունը Հայաստանում**

Հայաստանում սուր թոքաբորբով պայմանավորված մահացությունը վերջին 2 տասնամյակի ընթացքում էապես իջել է: Ներկայումս մինչև 1 տարեկանների շրջանում մանկական մահացության ինտենսիվ ցուցանիշը ստաբիլ ավելի ցածր է քան 2 / 1000 կենդանաձնի հաշվով, մինչդեռ շուրջ 20 տարի առաջ այն կամգում էր 4.5, իսկ սոցիալապես բարվոք 80-ականների վերջում այն կազմում էր 6 / 1000 կենդանաձնի հաշվով [Սարգսյան, Հակոբյան, 2005; Babloyan et al, 2009; ՀՀ ԱՆ, 2011]: Միննույն ժամանակ, ԱՀԿ կողմից Հայաստանում սուր թոքաբորբով, այլ շնչառական ինֆեկցիաներով և գրիպի վիրուսով առաջացրած մահացությունը մինչև 5 տարեկան երեխաների շրջանում գնահատվում է 29.4 / 100.000 –ի նկատմամբ: Համեմատական կարգով՝ Ռուսաստանում այն գնահատվել է 12.0 / 100 000 –ի նկատմամբ, իսկ Եվրոմիության երկրներում՝ 4.6 [WHO, 2012]:

Հայաստանում մինչև 7 տարեկան երեխաների շրջանում գրանցված հիվանդացության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Հայաստանի ամբուլատոր և հիվանդանոցային հաստատություններում թոքաբորբի գրանցված դեպքերը, 2010 -2012 թթ.**

	<b>2010 թ.</b>	<b>2011 թ.</b>	<b>2012 թ.</b>
Ամբուլատոր օղակ	<b>3 578</b>	<b>2 839</b>	<b>2 407</b>
Հիվանդանոցներ	<b>861</b>	<b>1 277</b>	<b>1 270</b>

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, միջինը տարեկան գրանցվել է 4000 դեպք: Դատելով նշված թվերի իրական լինելու մասին` պետք է նկատի ունենալ, որ դեպքերի որոշակի մասը չի գրանցվում, իսկ մյուս կողմից առկա է հիպերդիագնոստիկա: Կարելի է ենթադրել, որ թերգրանցումը կազմում է նշված թվերի կեսի չափով (ավելի մեծ թերգրանցում քիչ հավանական է, քանի որ միջին և ծանր դեպքեր չեն կարող խուսափել հոսպիտալացումից): Եթե տվյալ թիվը հարաբերակցվի մինչև 7 տարեկան ազգաբնակչության թվաքանակի (նույնիսկ որ ենթադրվի որ չկա հիպերդիագնոստիկա), ապա ստացվում է, որ տարեկան հիվանդացությունը Հայաստանում 0 – 7 տարեկանների շնչանում կազմում է ոչ ավել քան 0.03 կամ 30 / 1000 երեխայի նկատմամբ, ինչը մոտ է զարգացած երկրների և Ռուսաստանի թվերին և շուրջ 10 անգամ ավելի ցածր է քան զարգացող երկրներում, ուր, ըստ ԱՀԿ այն կազմում է 0.29:

Հայաստանում, ինչպես և այլ երկրներում, կարևոր նշանակություն ունի բուժօգնության, տվյալ պարագայում` սուր թոքաբորբի դեպքերի վարման որակը: Դրա գնահատման նպատակով, սկսած 1995–ից մինչև 2013 թթ. իրականացվել են դիտարկումներ (case management surveys) Հայաստանի բոլոր մարզերի բուժհաստատություններում և բուժօգնության բոլոր մակարդակներում: Հայտնաբերված թերությունները վերաբերվել են դեպքի վարման բոլոր օղակներին,

ներառելով ախտորոշումը, գնահատումը, հոսպիտալացման վերաբերյալ որոշում կայացումը, դեղորայքի ընտրությունը, հետագա վերահսկողությունը: Ախտորոշման տեսակետից, հանդիպում են գնման խնդիրներ, մասնավորապես շնչառական անբավարարության սխալ գնահատում, շնչառության հաճախականության հաշվարկի անտեսում, բոլոր տեսակի խզզոցների մեկնաբանում ի օգուտ թոքաբորբի: Անամնեզ հավաքագրելիս, բաց է թողնվում կարևոր տեղեկատվություն նախկինում ստացած դեղորայքի մասին, ինչպես նաև հիվանդության ընթացքի վրա դրա հնարավոր ազդեցության վերաբերյալ: Բուժման մեջ սխալները վերաբերվում են հակաբիոտիկի ընտրության, դեղաչափի, հակաբիոտիկների փոփոխման օրինաչափությունները չպահպանելուն: Բավականին հաճախ սխալները նկատվում են հետագա այցերի ժամանակ [ԱՀԿ, 2005, Սարգսյան, 2008]:

Մահացության տվյալների գործոնային վերլուծությունը (factor analysis) ցույց է տալիս, որ տվյալ տարածաշրջանում հիվանդացության գրանցման և մահացության ցուցանիշները ցուցաբերում են հակառակ փոխկապակցվածություն (կորելացիա) երկրորդ կարգի գործոնի նկատմամբ: Համաձայն գործոնային տեսության [Благыш, 1989], ի տարբերություն առաջին կարգի գործոնների, երկրորդ կարգի գործոններն ունեն «սուբյեկտիվ բնույթ»: Համապատասխանաբար, այն կարող է որակվել իբրև սուբյեկտիվ, տվյալ դեպքում բուժօգնության որակը բնութագրող գործոն:

Վերը նշված տվյալները վկայում են Հայաստանում մանկական հասակում թոքաբորբի բուժման որակի բարելավման անհրաժեշտության օգտին:

## ■ Պատճառագիտություն

Սուր թոքաբորբի էթիոլոգիայի իմացությունը կարևոր է, սակայն հաստատումը միշտ չէ, որ հնարավոր է: Դրան խանգարում են առավել ստույգ եղանակների (օրինակ՝ PCR տեխնոլոգիայի) հարաբերական դժվարամատչելիությունը, երեխաների մոտ խորիսի սովորական

մանրէաբանական հետազոտման դժվարությունները և տվյալների հավաստիության պակասը, հիվանդությունը առաջացնող հարուցիչների բազմազանությունը և դրանց բոլորի նկատմամբ փորձերի իրականացման գործնական անհնարությունը: Կարևոր է նաև հաշվի առնել տարվա ժամանակահատվածը, տարիքային խումբը և մի շարք այլ նկատառումներ: Մեթոդականորեն առավել կատարյալ եղանակներով իրականացված արյան ցանքսը արդյունավետ է առավելագույնը 15% դեպքերում: Հարաբերականորեն ցածր է իմունոֆլյուորեսցենտ եղանակով կատարված հետազոտության ախտորոշիչ արժեքը: PCR եղանակով իրականացված հետազոտություններում ևս միշտ չէ, որ հաջողվում է առանձնացնել հարուցիչը: Նույնիսկ գիտական առումով լիարժեք և ծախսատար ուսումնասիրություններում դժվար է պարզել ամբողջական էթիոլոգիական կառուցվածքը: Մասնավորապես, վերջին տասնամյակի ամենաձավալուն հետազոտությունների արդյունքում հնարավոր է եղել էթիոլոգիայի հաստատումը առավելագույնը 79% դեպքերում [Michelow et al, 2004]: Այս ամենը ի ցույց է բերում թոքաբորբի էթիոլոգիայի հաստատման և ախտորոշման իրական դժվարությունները [BTS, 2011]:

Հանրահայտ է, որ թոքաբորբի էթիոլոգիան կարող է լինել մանրէային, վիրուսային և խառը, որոշ դեպքերում թոքաբորբ առաջացնում են սնկերը:

Մանրէներից առաջին տեղը ամենուրեք շարունակում է պահպանել պնևմոկոկը՝ տարբեր հետազոտություններում այն պայմանավորում է դեպքերի 40–ից մինչև 73%, ընդ որում դեպքերի զգալի մասում այն գուգակցվում է վիրուսային վարակի հետ [Claesson et al, 1989, Juven et al, 2000, Wubbel, 1999, Michelow et al, 2004]: Պնևմոկոկը պահպանում է իր առաջնությունը նույնիսկ վերջին տասնամյակների ընթացքում որոշ զարգացած երկրներում PCV7 պատվաստման ներմուծման պայմաններում: Զարգացող երկրում՝ Գամբիայում իրականացված աշխատանքում մանրէային ծագումը հաստատվել է 77% դեպքերում [Forgie et al, 1991]:

Նկատվում է պնևմոկոկի կայունության որոշակի աճ: Մասնավորապես, ԱՄՆ–ում պնևմոկոկի բոլոր շտամների մոտ 20% եղել

են այս կան այն աստիճան ռեզիստենտ պենիցիլինների նկատմամբ և 7.5% դեպքերում՝ ցեֆտրիաքսոնի նկատմամբ [Tan et al, 2002]:

Կոնյուգացված պնևմոկոկային պատվաստման ներմուծումը աշխարհի զարգացած երկրներում սկսվել է շուրջ 2000 թ.: Այն առաջացնում է համապատասխան պատիճային պոլիսախարիդի նկատմամբ իմունոգլոբուլինների կլոնի ձևավորում: Պատվաստման ներմուծումը նպաստում է կրողականության մակարդակի իջեցմանը [Jodar et al, 2003]: Պատվաստման ներմուծման արդյունքում որոշ սերոտիպերի տեսակարար կշիռը էապես նվազել է, ինչպես նաև նվազել է հիվանդացության ընդհանուր մակարդակը: Սակայն պնևմոկոկի ընդհանուր սերոտիպերի թիվը կազմում է 91 և որոշ այլ տարածված սերոտիպեր չեն ընդգրկված պատվաստանյութի մեջ, մասնավորապես 19A սերոտիպը: Պատվաստման ներմուծմանը զուգահեռ, նշված սերոտիպերի տեսակարար կշիռը հիվանդացության ընդհանուր կառուցվածքում դանդաղորեն աճում է: Վերջին տարիների ընթացքում որոշակիորեն աճել է նաև պնևմոկոկի պենիցիլին – ռեզիստենտ շտամների տեսակարար կշիռը [BTS, 2011]:

Այն երկրներում, որտեղ չի իրականացվում հեմոֆիլուսի դեմ պատվաստում, հաճախականությամբ երկրորդ տեղը գրավում է հեմոֆիլային ցուպիկը, պայմանավորելով դեպքերի շուրջ 15%-ը, այնուհետ իլամիդիան՝ 12% և միկոպլազման՝ 4%: Եթե երկրում նշված պատվաստումը իրականացվում է ռուտին եղանակով, ապա պնևմոկոկին անմիջապես հետևում են միկոպլազման՝ 14% և իլամիդիան՝ 9% [Michelow et al, 2004]: Դրանց նշանակությունը աճում է հարաբերականորեն ավագ տարիքային խմբերում՝ այստեղ միկոպլազման (*Mycoplasma pneumoniae*) պայմանավորում է թոքաբորբի բոլոր դեպքերի մոտ մեկ երրորդը: Խլամիդիան (*Chlamydia pneumoniae*) ևս ունի որոշակի նշանակություն և այն պատասխանատու է դեպքերի 5-14% -ի համար:

Այլ ստրեպտոկոկերը (մասնավորապես Ա խմբի) դեռ ունեն որոշակի դերակատարում թոքաբորբի էթիոլոգիայում (1-7%), ընդ որում դրանք պայմանավորում են առավել ծանր ընթացք և հայտնաբերվում են վերակենդանացման բաժանմունքներ ընդունվող երեխաների մոտ



[Michelow et al, 2004; Cevey-Macherelet et al, 2009]: Այլ մանրէներից նշանակություն ունի “ոսկեգոծ ստաֆիլոկոկը”, որի հիվանդացությունը գուգակցվում է գրիպի հիվանդացության հետ: Չնայած ցածր տարածվածության, այն դեռ հանդիպում է նույնիսկ զարգացած երկրներում [Finelli et al, 2008]: Որոշակի քանակով դեպքեր զարգանում են *Moraxella catarrhalis* հարուցչով վարակվելու հետևանքով [Korpi et al, 1992; Claesson et al, 1994; Block et al 1995; BTS, 2002]: Վերջերս հայտնաբերվել է թոքաբորբի նոր հարուցիչ՝ *Simkania negevensis* [Heiskanen et al, 2008; Fasoli et al, 2008]: Վաղուց հաստատվել է նաև այլ՝ գրամ բացասական հարուցիչների դերակատարումը, որոնք սակայն պատասխանատու են գլխավորապես ներհիվանդանոցային թոքաբորբի զարգացման համար, ինչպես նաև հանդիպում են խանգարված իմունիտետով անձանց մոտ [Таточенко, 2010]: Համապատասխանաբար, դրանց հանդիպելու հավանականությունը “սովորական” տնային թոքաբորբի դեպքերում, մինիմալ է:

Վիրուսները հանդիսանում են սուր թոքաբորբի պատճառ 30 – 67% դեպքերում, ընդ որում վիրուսներն ավելի մեծ դերակատարում ունեն հատկապես մինչև մեկ տարեկան երեխաների շրջանում: Վիրուսների տեսակարար կշիռը թոքաբորբի էթիոլոգիական կառուցվածքում ավելի մեծ է զարգացած երկրներում [Michelow et al, 2004; Cevey-Macherel et al, 2009]:

Վիրուսներից առաջին տեղը գրավում է ռեսպիրատոր-սինտիցիալ վիրուսը (RSV), որը հանդիպում է մինչև 40% դեպքերում [Rowe et al, 1998]: Ըստ որոշ գնահատականների, RSV –ն առաջացնում է տարեկան երեխաների շրջանում 160 000 մահվան դեպք, որոնց զգալի մասը հենց թոքաբորբեր են: Ռեսպիրատոր-սինտիցիալ վիրուսը և պարագրիպի վիրուսները ախտահարում են հատկապես կրծքի հասակի երեխաներին: Հետազայում աճում է ադենովիրուսի նշանակությունը:

Հարաբերականորեն վերջերս հայտնաբերված թոքաբորբի հարուցիչներից են մարդու մետապնևմովիրուսը (Human metapneumovirus- HMPV), այն հանդիպում է դեպքերի 8%-ից մինչև 11.9%-ում: Մեկ այլ վիրուս՝ բոկավիրուսը (Human Bocavirus - HboV),

հայտնաբերվել է 4.5 - 15.2% դեպքերում [Choi E et al, 2006; Williams, 2004; Wolf et al, 2006; Fry et al, 2007; EBceeba, 2009]:

Բավականին վաղուց ապացուցվել է, որ գրիպի վիրուսը կարող է հանդիսանալ ծանր ելքերով ընթացող թոքաբորբի առաջնային պատճառ, ընդ որում այն կարող է ախտահարել ոչ միայն թուլացած իմունիտետով հիվանդներին, երեխաներին և ծերերին, այլ նաև նախկինում առողջ անձանց: Մեծ Բրիտանիայում իրականացված հետազոտություններում աշուն - գարուն ժամանակահատվածում գրիպի վիրուսը հայտնաբերվել է 16% դեպքերում [Laundy et al, 2003]:

Թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում բավականին հաճախ հանդիպում է խառը վիրուս – մանրէային ծագումը՝ կազմելով դեպքերի 23 – 33%: Թոքաբորբի դեպքերի զգալի մասում առաջանում է վիրուսների և մանրէների համատեղ ազդեցության հետևանքով: Առավել ակնհայտ նման “համագործակցությունը” դրսևորվում է գրիպի վիրուսի և պնևմոկոկի զուգակցման դեպքում: Ապացուցվել է, որ գրիպի վիրուսը անջատում է և նեյտրալիզացնում է էպիթելիալ բջիջների մակերեսին գտնվող սիալաթթուն, ինչի արդյունքում պնևմոկոկի ներթափանցումն ու բազմացումը դառնում է առավել դյուրին [Madhi et al, 2004]:

Ապացուցված է, որ սուր շնչառական ինֆեկցիաներով տառապող հիվանդները կարող են ունենալ շնչառական ուղիներում բազմակի վիրուսներ: Դրանց համագործակցության մեխանիզմները և արդյուքները դեռ պարզ չեն: Վերջին տարիներին գրանցված SARS կորոնավիրուսով և “թոչնի” գրիպի ծագումով զոոնոտիկ ինֆեկցիաների բռնկումից հետո ակնհայտորեն պարզ դարձավ, որ “նոր” կամ փոփոխված “հին” վարակների առաջ գալը շարունակվելու է, գլոբալ մակարդակում դնելով մշտապես նոր հարցեր թոքաբորբի էթիոլոգիական կառուցվածքի վերաբերյալ [Leung et al, 2004]:

Թոքաբորբի էթիոլոգիայի տարիքային որոշ առանձնահատկությունները ներկայացված են թիվ 2 աղյուսակում.

**Աղյուսակ 2. Թորաբորբի էթիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները**

< 1 ամսական	Group B streptococcus, gram negative enteric bacteria, Listeria monocytogenes, Chlamydia trachomatis, Staphylococcus aureus, cytomegaloviruses
1-24 ամսական	Streptococcus pneumoniae, Haemophilus influenzae <sup>1</sup> , Staphylococcus aureus, gram negative enteric bacteria, Streptococcus pyogenes, Bordetella pertussis, Chlamydia trachomatis, Mycoplasma pneumoniae, RSV, parainfluenza virus,
2-5 տարեկան	Streptococcus pneumoniae, Haemophilus influenzae, Mycoplasma pneumoniae, Chlamydia pneumoniae, Streptococcus pyogenes, Staphylococcus aureus, RSV, parainfluenza virus, bokavirus, metapneumovirus
6-18 տարեկան	Mycoplasma pneumoniae, Streptococcus pneumoniae, Chlamydia pneumoniae, respiratory viruses, Haemophilus influenzae, Staphylococcus aureus

**■ Ախտաճնություն**

Դեպքերի բացարձակ մեծամասնությունում բնորոշ է հարուցչի բրոնխոզեն ներթափանցումը: Հեմատոզեն ճանապարհը նկատվում է միայն սեպտիկ բնույթի ախտահարումների արդյունքում: Լիմֆատիկ ճանապարհով ինֆեկցիան տեսականորեն կարող է ներթափանցել թոքեր իմունոդեֆիցիտ ունեցող վաղ հասակի երեխաների մոտ մարմնի այլ հատվածներից:

Առաջնային բազմացումը տեղի է ունենում մանրագույն բրոնխիոլներում, մասնավորապես դրանց պարկիկանման ելուններում՝ ամպուլաներում: Մանրէների կայչելուն և հետագա ներթափանցմանը նպաստում են վարակմանը նախորդած մուկոցիլիար ապարատի

<sup>1</sup> Եթե տվյալ տարածաշրջանում չի իրականացվում համապատասխան պատվաստումը

ընկճումը, լորձի գերարտադրությունը և դրա բակտերիցիդ հատկությունների կորուստը: Նշանակություն ունի նաև ֆագոցիտոզի ընկճումը: Հետագայում վարակը տարածվում է թոքերի պարենխիմատոզ հյուսվածքի վրա, ախտահարելով դրա պերիբրոնխիալ, հենային և ավելուլար հատվածները: Պարենխիմայի բորբոքումը կանխորոշում է արդյունավետ գործող շնչառական մակերեսի իջեցումը և ռեստրիկտիվ շնչառական անբավարարության պատկերի զարգացումը:

Շնչառական խանգարումները չեն սահմանափակվում ռեստրիկտիվ փոփոխություններով: Ի պատասխան գրգռող ազդակների և թթվածնի անբավարարության, աճում է բրոնխների հարթ մկանների տոնուսը, խորխի արտադրությունը: Տեղի է ունենում տարբեր հատվածների օբստրուկցիա, կարող են զարգանալ նաև ատելեկտատիկ հատվածներ, արյան շրջանառության տեղային խանգարումներ: Ոչ միայն օջախում, այլ նաև հարակից հատվածներում տեղի է ունենում ավելելուլար դիֆուզիայի որոշակի աստիճանի խանգարում: Երեխաների թոքերի հյուսվածքին բնորոշ առանձնահատկություններից է ներթոքային շունտերի բացումը, ինչն իր հերթին բերում է դեպի վերջույթային ավելուլներ արյան հոսքի խանգարմանը և հիպոքսիայի հետագա խորացմանը: Ի պատասխան հիպոքսեմիայի, առաջին հերթին խանգարվում է միոկարդի և գլխուղեղի ֆունկցիաները՝ սա արտահայտվում է սրտի և թոքերի (“կարդիոռեսպիրատոր”), ԿՆՀ (“նեյրոտոքսիկ”) գործունեության խանգարումներով, ինչն իր հերթին ևս վատթարացնում է հիվանդի վիճակը:

Կախված հարուցից, տեղային և ընդհանուր իմունիտետի առանձնահատկություններից՝ բորբոքումը կարող է տեղակայվել և սահմանափակվել գլխավորախես ռեսպիրատոր բրոնխների շուրջ, առաջացնելով օջախային թոքաբորբ՝ բրոնխոպնևմոնիա: Բորբոքումը կարող է ընդգրկել նաև մի ամբողջական սեզմենտ այն դեպքերում, եթե տեղի է ունենում սեզմենտի բրոնխի խցանում ինֆեկցված լորձով, այտուցի և բորբոքման զարգացում ամբողջ սեզմենտում, ներառյալ միջավելուլար միջնապատերը: Տվյալ տարբերակում սեզմենտար թոքաբորբը պայմանականորեն գնահատվում է որպես առաջնային: Ի տարբերություն դրան, երկրորդայինի դեպքում բորբոքումը մի օջախից

հազային հրոցների հետևանքով տարածվում է սեզմենտի այլ հատված, ի վերջո բերելով օջախների միաձուլմանը: Բլթային կամ կրուպոզ թոքաբորբը հանդիսանում է գլխավորապես դեպի պնևմոկոկ հիպերերզիկ ռեակցիայի զարգացման արդյունք: Ալվեոլների վարակումը տեղի է ունենում Կոնի ճեղքերի միջոցով: Արդյունքում զարգանում է ամբողջ բլթի խիստ այտուց, ինչն էլ կանխորոշում է արտահայտված շնչառական խանգարումները [Каганов, 1995, Nelson, 2011; Баранов, 2009; Таточенко, 2010]:

Սուր թոքաբորբի դեպքում իմուն համակարգի առավել տիպիկ փոփոխությունները նախկինում առողջ, հարաբերականորեն ավագ տարիքի երեխաների մոտ ներառում են առաջնային ռեակցիա՝ B-լիմֆոցիտների, տեղային և ընդհանուր իմունիտետի ակտիվացում: Այնուհետ տեղի է ունենում երկրորդային ռեակցիաների ակտիվացում, ինչի ցուցիչն է հետագայում IgG –ի մակարդակի բարձրացումը: Վաղ տարիքի երեխաների մոտ ընդհանուր առմամբ նկատվում է դիսիմունգլոբուլինեմիա, ինչն այնքան էլ բնորոշ չէ ավագ տարիքի երեխաներին: Սուր ծանր ընթացք ունեցող թոքաբորբի դեպքում հայտնաբերել են Ig A –ի մակարդակի իջեցում, նկատվել են CD4+, CD3+ մակարդակի իջեցում, CD 19+ բարձրացում [Каганов, 1995, Zhuxia Hua et al, 2013].

Իր հերթին, իմունիտետի որոշ ցուցանիշների ի սկզբանե ցածր մակարդակները հանդիսանում են ռիսկի գործոն թոքաբորբի զարգացման համար: Իմունիտետի բնածին խանգարումների ժամանակ թոքերի ընդրգկման հաճախականությունը կազմում է 66%: Այդ դեպքերում սովորաբար նկատվում է կրկնվող թոքաբորբ, քրոնիկ ընթացք: Սակայն բնածին խանգարումներից հաճախ հանդիպող IgA դեֆիցիտն առավել հաճախ նպաստում է բրոնխիտների զարգացմանը: Ձեռքբերովի իմունոդեֆիցիտները զարգանում են վիրուսների ազդեցության հետևանքով: ՄԻԱՎ վիրուսով վարակվածների շրջանում թոքերի ախտահարումը հանդիպում է 93% դեպքերում: Իմունիտետի ժամանակավոր խանգարում (բջջային իմունիտետի անկում, ֆագոցիտոզի ընկճում) կարող են առաջացնել բոլոր շնչառական

վիրուսները, կարմրուկի վիրուսը, հերպես վիրուսը, ինչը որոշակիորեն կարող է նպաստել թոքաբորբի զարգացմանը [Каганов, 1995]:

## ■ **Կլինիկական պատկեր**

Թոքաբորբի հիմնական կլինիկական նշանները քաջ հայտնի են՝ հազ, տենդ, շնչառական անբավարարության արտահայտություն հանդիսացող դժվարացած և/կամ հաճախացած շնչառություն, կրծքավանդակի ստորին հատվածի ներքաշումներ ներշնչման պահին: Հիվանդությունը դեպքերի մեծ մասում ուղեկցվում է ինտոքսիկացիայի այլ նշաններով: Մանիֆեստացիան առավել հաճախ ունի սուր բնույթ, երբ հիմնական նշանները ի հայտ են գալիս կարճ ժամանակահատվածում, սովորաբար մեկ կամ առնվազն երկու օրվա ընթացքում: Որոշ դեպքերում, գլխավորապես հարաբերականորեն ավագ տարիքի երեխաների մոտ, նման՝ “դասական” պատկեր չի նկատվում, թոքաբորբը չի ուղեկցվում ինտոքսիկացիայով: Մյուս կողմից, երեխայի մոտ կարող է նկատվել միայն ինտոքսիկացիա, իսկ շնչառական խանգարումները լինեն թույլ արտահայտված կամ ի հայտ գան ավելի ուշ փուլում:

Ստորև ներկայացված են թոքաբորբի անամնեզի հիմնական կետերը, որոնք պահանջում են ուշադրություն, հիմնական նշանները, դրանց ծագումնաբանությունը, ախտորոշիչ արժեքը, տարիքային առանձնահատկությունները:

### **Գանգատներ / հիվանդության անամնեզ.**

Հիվանդի վիճակը գնահատելիս, հարկ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ տեղեկատվությանը, ինչպես շարադրված է ՄՀԻՎ ձեռնարկում.

- հազ՝ բնույթը, տևողությունը, սկիզբը և փոփոխությունը հիվանդության ընթացքում,
- ջերմություն՝ տևողությունը, աստիճանը,

- դժվարացած և / կամ հաճախացած շնչառություն, շնչարգելություն, շնչառության ժամանակ լսվող ձայներ,
- ընդհանուր վիճակը հիվանդության ժամանակ. անհանգստություն կամ թուլություն, անսովոր քնկոտություն, գիտակցության խանգարումներ, ցնցումներ,
- հեղուկ խմելու կամ կուրծք ծծելու ունակությունը, հիվանդության ժամանակ երեխայի կողմից ընդունված հեղուկների մոտավոր օրեկան ծավալները,
- գանգատներ այլ օրգան - համակարգերից (փսխում, փորլուծություն, փորացավ, միզելու հաճախականություն և այլն),
- էպիդանամներ:

⇒ Չափազանց կարևոր է նաև հետևյալ տեղեկատվության հավաքագրումը. տվյալ դեպքի կապակցությամբ ստացած դեղորայքը, դեղաչափը, ընդունման տևողությունը, ազդեցությունը,

#### **Կյանքի անամներգ.**

Հավաքելիս, ի լրումն այլ ընդունված հարցադրումների, պարտադիր է ճշտել (եթե բժիշկը չգիտի).

- նախկինում կրած կամ ներկայումս առկա սուր և խրոնիկ հիվանդությունները, հատկապես՝ շնչառական և ալերգիկ, դրանց վաղեմությունը, կատարված բուժումը, ստացած դեղորայքը, հատկապես՝ հակաբիոտիկները, դեղորայքի նկատմամբ ալերգիայի առկայությունը,
- ժառանգաբանական և ընտանեկան անամներգ, մասնավորապես շնչառական հիվանդությունների առումով, ներառյալ շնչառական ալերգիաները, բրոնխային ասթման և տուբերկուլյոզը,
- կատարված պատվաստումները,
- ընտանիքի սոցիալական վիճակը և տանը բուժման, խնամքի կազմակերպման հարցերը:

## Թոքաբորբի հիմնական ախտանիշներ

### Հազ

Հազը հանդիսանում է թոքաբորբի առավել ճանաչված նշաններից մեկը: Հազի դեպքերի բացարձակ մեծամասնությունում թոքաբորբ չկա, սակայն հազի առկայությունը ստիպում է բժիշկներին մշտապես հիշել թոքաբորբի հավանականության մասին [Durbin et al, 2008]: Հազային ռեֆլեքսը շնչուղիների ինքնամաքման առավել կարևոր մեխանիզմն է, այն ծագում է տարբեր հատվածներում՝ կոկորդից մինչև թոքամիզ տեղակայված ռեցեպտորների (բացառությամբ մանր բրոնխների և ավելուների) գրգռման արդյունքում: Հազի շնորհիվ օդատար ուղիներում տեղի են ունենում օդի հրումային տեղաշարժեր ավելուներից դեպի բրոնխի պրոքսիմալ հատվածները: Արդյունքում՝ օդի հետ միաժամանակ, բրոնխներից դուրս են մղվում նաև օտարածին խառնուրդները և մանրէները: Հազի արդյունավետությունը կախված է օդային հոսքի հզորությունից, բրոնխների անցանելիությունից և շնչառական մկանների վիճակից: Երեխաների մոտ շնչառական մկանները թույլ են զարգացած, որի պատճառով հարաբերականորեն թույլ է նաև հազային հրոցի ուժը:

Նորմալում բրոնխային արտադրուկը 90-95% կազմված է ջրից, մնացած 5% կազմում են անլուծելի մակրոմոլեկուլար միացությունները, որոնք պարունակում են 2-3% մուցին, 0.1-0.5% պլազմայի սպիտակուցներ, 0.3-0.5% լիպիդներ: Արտադրուկի հիմնական բաղադրամասը գլիկոպրոտեինային մակրոմոլեկուլներն են, որոնք կազմված են դիսուլֆիդային կապերով միացած ենթամիավորներից: Այս կապերը ապահովում են բրոնխների արտադրուկի մածուցիկությունը: Մածուցիկության ավելացման դեպքում թարթչային էպիթելի շարժողական արագությունը նվազում է: Միևնույն ժամանակ, նվազում է նաև սեկրետոր IgA-ի պարունակությունը, ինչը ազդում է տեղային պաշտպանության վրա: Թոքաբորբի ժամանակ փոփոխությունները արտահայտվում են գավաթաձև բջիջների գերֆունկցիայով, բրոնխային գեղձերի կողմից լորձի հիպերսեկրեցիայով և դրա հատկությունների փոփոխումով: Լորձաթաղանթի այտուցը և թարթչավոր էպիթելի



ակտիվության արգելակումը բերում են բրոնխների լորձաթաղանթի էվակուատոր և պաշտպանողական ֆունկցիաների իջեցմանը:

⇒ **Որոշ դեպքերում, հազը կարող է շատ թույլ արտահայտված լինի հատկապես կյանքի առաջին ամիսների երեխաների մոտ:**

Սա հուշում է թոքաբորբի այլ ախտանիշների կարևորությունը, ինչպիսիք են հաճախաշնչությունը, շնչառական անբավարարության այլ կլինիկական նշանները և / կամ տենդը, ինտոքսիկացիան [BTS, 2011]:

### **Հաճախացած / դժվարացած շնչառություն**

Հանդիսանալով թոքաբորբի բնորոշ շնչառական անբավարարության արտահայտություն, “խառը” բնույթի հաճախաշնչությունը թոքաբորբի ամենահիմնական կլինիկական նշաններից մեկն է, այլ՝ ներշնչական կամ արտաշնչական ծագման բացակայության պայմաններում: Նորմայում ներշնչման փուլ տևողության հարաբերությունը արտաշնչման փուլին կազմում է 2:1: Ներշնչական հեղցի (կրուպ, ստրիդոր) դեպքում այդ հարաբերությունը կազմում է 3:1, իսկ բրոնխների օբստրուկցիայի ժամանակ այն դառնում է 1:2: Ի տարբերություն դրան, բուն թոքաբորբին բնորոշ հեղցի ժամանակ նշված հարաբերությունը մոտ է նորմային, կազմելով նույն 2:1:

Համաձայն ԱՀԿ ուղեցույցների, “հաճախացած շնչառություն” կլինիկական նշանը գնահատվում է դրական և ունի վճռորոշ նշանակություն թոքաբորբի ախտորոշման համար, եթե շնչառության հաճախականությունը մեկ րոպեում, երեխայի հանգիստ վիճակում կազմում է [WHO, 1993].

- ⇒ 60 և ավելի՝ նորածինների մոտ մինչև 2 ամսական հասակը,
- ⇒ 50 և ավելի՝ մինչև մեկ տարեկան կրթծի հասակի երեխաներ,
- ⇒ 40 և ավելի՝ մեկից հինգ տարեկան երեխաներ:

Ի լրումն, ներկայումս առաջարկվել են հաճախաշնչության այլ տարիքային չափանիշներ, որոնք կարող են օգտավետ լինել բժշկի համար, մասնավորապես [Mathews et al, 2009].

⇒ 30` 5 - 10տ. երեխաների համար

⇒ 24` 10տ. – ից բարձր

Հաճախաշնչությունը հակառակ կորելացիա ունի թթվածնի սատուրացիայի հետ ( $r = - 0.28, p < 0.001$ ): Հիպոքսեմիայի մասին 63% զգայունությամբ և 89% յուրահասկությամբ խոսում է կրծքի հասակի երեխաների մոտ մեկ ընդհանուր 70 -ից բարձր հևցի առկայությունը [Smyth et al, 1998] :

“Հաճախաշնչություն” ախտանիշի զգայունությունը ոչբարդացած թոքաբորբի ախտորոշման համար գնահատվել էր շուրջ 80%, սակայն յուրահասկությունը ցածր է [WHO, 1993; 2003]: ԱՀԿ կողմից 2012 թ. հրապարակված տվյալների համաձայն, հաճախաշնչություն ախտանիշի (ըստ ԱՀԿ չափանիշերի) զգայունությունը կազմում է 84%, իսկ յուրահասկությունը՝ 19%: Տենդի ներմուծումը ախտորոշիչ ակտիվությամբ բերում է զգայունության նվազմանն մինչև 81%, սակայն բարձրացնում է յուրատակությունը մինչև 46% [WHO, 2012]:

Շնչառական խանգարումների ավելի ծանր ընթացքի դեպքում, ինչի մասին մասնավորապես վկայում են կրծքավանդակի ստորին հատվածի ներքաշումները, տվյալ նշանի ախտորոշիչ նշանակությունը իջնում, համապատասխանաբար նշված ախտանիշի առկայության դեպքում շնչառության հաճաճականությունը չունի վճռորոշ նշանակություն: Եթե հիմնվել միայն հաճախաշնչության ախտանիշի վրա, և արդի ԱՀԿ արձանագրությունը կիրառելիս, հնարավոր է հայտնաբերել շուրջ 80% այն հիվանդների, որոնք ունեն թոքաբորբի հավանականություն և հակաբիոտիկների կիրառման անհրաժեշտություն:

⇒ **Հաճախաշնչությունն ունի կարևորագույն նշանակություն թոքաբորբի ախտորոշման համար, սակայն թոքաբորբը կարող է ընթանալ առանց հաճախաշնչության:**

Ի նկատի ունենալով վերը նշված դրույթը, ԱՀԿ կողմից առաջ է քաշվել թեզ, որ անհրաժեշտ է հստակեցնել թոքաբորբի ախտորոշումը և բարելավել վարումը, ախտորոշման համար պետք է հաշվի առնել նաև այլ յուրահատուկ նշանները, հատկապես, եթե գնումը իրականացնում է բժիշկը [WHO, 2003]: Մյուս կողմից ախտորոշման ավգորիթմը ենթարկվում է էական փոփոխության, եթե կա թոքաբորբի և բրոնխների օբստրուկցիայի դեպքերի տարբերակման անհրաժեշտություն, ինչպես նշվել է ԱՀԿ կողմից (տես ստորև):

### **Կրծքավանդակի ներքաշումներ**

Կրծքավանդակի ստորին հատվածի՝ էպիգաստրիումի ներքաշումը զարգանում է շնչառական անբավարարության խորացման հետ, երբ միայն շնչառության հաճախացմամբ դառնում է անհնար պահպանել մինիմալ անհրաժեշտ արյան գազերի խտությունը և խնդիր է ծագում այդ նպատակով ներգրավել շնչառության մեջ լրացուցիչ մկաններ: Հաշվի առնելով այն, որ երեխաների մոտ շնչառությունը գլխավորապես կապվում է ստոծանու աշխատանքի հետ, առաջին հերթին ներգրավվում է հենց ստոծանին: Կլինիկական նշանի առկայությունը խոսում է զգալի աստիճանի անբավարարության մասին: Սակայն հարաբերական ավագ տարիքի երեխաների մոտ, մոտավորապես 3 տարեկանից սկսած, առավել ևս ավելի ավագ տարիքում, երբ այլ խմբերի շնչառական մկանները ավելի ակտիվ են ներգրավվում շնչառության մեջ, սույն նշանի ախտորոշիչ արժեքը որոշակիորեն իջնում է [Palafox et al, 2000]:

### **Շնչառական անբավարարության այլ նշաններ**

Կենտրոնական ցիանոզը, պերիօրալ ցիանոզը, տնքոցով ուղեկցվող շնչառությունը, կրծքավանդակի՝ միջկողային և պարանոցի մկանների մասնակցությունը շնչառությանը, միջկողային, վեր- և ստորանրակային շրջանների ներքաշումները նույնպես հանդիսանում են այս կամ այն աստիճանի շնչառական անբավարարության նշաններ, որոնց պետք է պարտադիր ուշադրություն դարձնել հիվանդության ծանրության մասին ընդհանուր պատկերացում ստանալու համար:

## **Աուսկուլտացիայի տվյալներ**

Թոքաբորբի ժամանակ աուսկուլտատիվ ֆենոմենների զարգացումը պայմանավորվում է ավելոներում այս կամ այն աստիճանի ինֆիլտրատի կուտակումով, ինչպես նաև բրոնխներում հավելյալ քանակությամբ խորխի առկայությամբ և / կամ դրանց նեղացմամբ:

Հանրահայտ է, որ թոքերի աուսկուլտացիան պետք է իրականացվի երեխայի հանգիստ վիճակում, կամ եթե դա չի հաջողվում իրականացնել՝ քնի ժամանակ: Թոքաբորբի հիմնական աուսկուլտատիվ նշաններն են ֆոկալ կրեպիտացիոն և / կամ մանր բշտիկավոր խզոցները, շնչառության թուլությունը և բրոնխային շնչառությունը: Այս ֆենոմենների յուրահատկությունը թոքաբորբի ախտորոշման համար բավականաին բարձր է, հատկապես միակողմանի տեղակայման դեպքում: Մի հետազոտությունում ցույց է տրվել, որ բրոնխային շնչառության և մանր բշտիկավոր խզոցների զգայունությունը կազմում է 75%, իսկ յուրահատկությունը՝ 57% [Smyth, 1998]:

⇒ **Սակայն, թոքաբորբի որոշ դեպքերում չի նկատվում և որևէ աուսկուլտատիվ ֆենոմեն:**

Մասնավորապես, Ռուսաստանում կատարված աշխատանքում նման դեպքերի քանակը գնահատվել է 30% [Генне и др, 2005]: Մյուս կողմից, առկա է աուսկուլտացիայի նշանների մեկնաբանման խնդիր, երբ որ տարբեր ծագման այլ խզոցները գնահատվում են որպես թոքաբորբի նշան [Սարգսյան և այլոք, 2008]:

Հետևաբար, բժշկի գործելակերպում աուսկուլտացիայի տվյալների գրագետ գնահատումը պարտադիր է թոքաբորբի ախտորոշման համար, սակայն ևս չի հանդիսանում բացարձակ նշան և պետք է դիտարկվի այլ նշանների հետ համատեղ:

## **Պերկուսիայի տվյալներ**

Ունի նշանակություն թոքաբորբի կլինիկական ախտորոշման համար: Շեղումները՝ սովորաբար ձայնի կարճացումը կամ բթացումը՝ ավելի

ցայտուն են համապատասխանաբար սեզմենտային և բլթային թոքաբորբերի կամ պլերիտների ժամանակ:

## **Տենդ**

Տենդը ՄՇԻ-ների դեպքում սովորական նշան է: Այն օրգանիզմի պաշտպանական պատասխան է՝ բարձր ջերմությունը խթանում է  $\gamma$ -ինտերֆերոնի և ուռուցքների քայքայման  $\alpha$ -գործոնի ( $\alpha$ -TNF) արտադրությունը, որոնք իրենց հերթին նպաստում են հակամարմինների առաջացմանը: Տենդը, հատկապես բարձր թվանիշների վրա 3 օր և ավելի պահպանվող՝ թոքաբորբի ախտորոշման համար կարևոր նշաններից է [Таточенко, 2010]: Որոշ դեպքերում տենդը հանդիսանում է թոքաբորբի գրեթե միակ նշան: Սակայն, հաշվի առնելով տենդ առաջացնող հիվանդությունների բազմազանությունը, նշանի յուրահատկությունը ցածր է: Մյուս կողմից, ընդհանուր առմամբ ջերմության բացակայությունը բնորոշ չէ թոքաբորբին: Միայն որոշակի՝ եզակի դեպքերում կարող են դիտվել նաև ասիպիկ ընթացք ունեցող աֆեբրիլ թոքաբորբեր<sup>2</sup>:

Տենդը ներառված է ԱՀԿ կողմից թոքաբորբի և բրոնխային օբստրուկցիայի համախտանիշի տարբերակման ալգորիթմում [WHO, 2013]:

⇒ **Այսպիսով, տենդը հանդիսանում է թոքաբորբի ախտորոշման համար շատ կարևոր, բայց նույնապես ոչ բացարձակ նշան:**

## **Ինտոքսիկացիայի նշաններ**

Ընդհանուր ինտոքսիկացիայի երևույթները արտահայտվում են անհանգստությամբ կամ հակառակը՝ թուլությամբ, աղինամիայով: Բնորոշ են ախորժակի բացակայությունը, քնի խանգարումները, սննդից հրաժարվելը: Թոքաբորբը ուղեկցվում է նաև գունատությամբ, մաշկի

---

<sup>2</sup> Ըստ որոշ հետազոտությունների՝ “տենդ” նշանի բացասական կանխորոշիչ նշանակությունը կազմում է 97% [BTS, 2011], այսինքն դրա բացակայության դեպքում տվյալ տոկոս հավանականությամբ կարելի է ժխտել թոքաբորբի առկայությունը:

մարմարագույն երանգով: Որպես ինտոքսիկացիայի և հիպոքսեմիայի արդյունք, զարգանում է տախիկարդիա:

Թոքաբորբի ժամանակ ընդհանուր ինտոքսիկացիայի երևույթները, ի տարբերություն այլ շնչառական հիվանդությունների, մասնավորապես բրոնխիտների, առավել ցայտուն են: Դրանք արտահայտվում են հիվանդության առաջին օրերից, գնալով ուժեղանում են, հասնելով մաքսիմումի հիվանդության 2 - 3 օրը:

⇒ Ինչևէ, պետք է հիշել, որ որոշ դեպքերում թոքաբորբը չունի դասական կլինիկական պատկեր և ինտոքսիկացիան ևս այդքան էլ արտահայտված չէ: Դա հատկապես վերաբերվում է հարաբերականորեն ավագ, դպրոցահասակ տարիքի երեխաներին, որոնց մոտ թոքաբորբի հարուցիչը միկոպլազման է կամ խլամիդիան:

### **Կրծքավանդակի ցավեր, փորացավեր**

Հանդիսանում են թոքաբորբի հնարավոր արտահայտություն: Սովորաբար ուղեկցում են բլթային թոքաբորբը 3 տարեկանից բարձր երեխաների մոտ: Առաջանում են թոքամիզի զրգոման և ցավերի ճառագայթման արդյունքում: Վաղուց ի վեր նկարագրված է, որ թոքաբորբի ցավերը կարող են նույնսիկ սուր որովայնի կասկած հարուցել: Համապատասխանաբար, ջերմությամբ ուղեկցվող կասկածելի փորացավերի դեպքում թոքաբորբի նշանների զննումը պարտադիր է:

### **Շնչառական անբավարարության կլինիկական գնահատում**

Շնչառական անբավարարությունը սուր թոքաբորբի արտահայտությունն է: Դրա հիմնական պատճառը արդյունավետ գործող շնչառական մակերեսի իջեցումն է, երբ շնչառական համակարգը չի կարողանում բավարարել օրգանիզմի պահանջարկը թթվածնի մեջ: Անբավարարության հետևանքով փոփոխվում են թթվածնի, ածխածին գազի, թթվահիմնային վիճակը բնութագրող ցուցանիշները: PaO<sub>2</sub> իջնում

է, հասնելով 60 mm Hg, pH իջնում է 7,35 –ից ցածր, PaCO<sub>2</sub> բարձրանում է 50 mmHg –ից բարձր:

Շնչառական անբավարարության աստիճանը որոշելիս, հարկ է պարտադիր հաշվի առնել վերոհիշյալ ցուցանիշները և թթվածնի սատուրացիայի տվյալները (տես ստորև):

Կլինիկական տեսակետից, անբավարարության աստիճանը պայմանականորեն կարող է բնութագրվել հետևյալ կերպ.

I աստիճանի ժամանակ առաջանում է հեղ / հաճախաշնչություն ֆիզիկական ծանրաբեռնվածության, լացի, կերակրման ժամանակ՝ առանց լրացուցիչ մկանների մասնակցության, պերիորալ ցիանոզն ունի ոչ մշտական բնույթ, ուժեղանում է անհանգստության ժամանակ, պուլսի և շնչառության հաճախականությունը փոքր ինչ բարձր են կամ նույնիսկ մոտ են նորմալ ցուցանիշներին, դրանց հարաբերությունը կազմում է 3-3.5 / 1:

II աստիճանի դեպքում հեղը և / կամ հաճախացած շնչառությունը կրում են մշտական բնույթ, մասնակցում են լրացուցիչ մկանները, ի հայտ են գալիս տարբեր ներքաշումներ, առկա է պերիորալ և ակրոցիանոզ, մաշկի ընդհանուր գունատություն, եղունգների գունատություն, պուլսի և շնչառության հաճախության հարաբերությունը կազմում է 2.5 / 1:

III աստիճան. արտահայտված են մշտական, ծանր հեղը, ժամանակ առ ժամանակ առիթմիկ, պարբերական շնչառությունը, կարող է լինել բրադիպնոե, առկա է կենտրոնական ցիանոզ, մաշկի մարմարագույն երանգ, պուլսի և շնչառության հարաբերությունը կազմում է 1.5 / 1:

### **Թոքաբորբի բարդություններ**

Թոքաբորբի բարդությունները առավելապես հանդիպում են 1 - 5 տարեկան երեխաների խմբում [Tan et al, 2002, Lee et al, 2010]: Դրանց թվին են պատկանում.

- Թոքային բարդություններ՝ թոքի թարախակույտի և դեստրուկցիայի զարգացում, սինպնոնիկ և մետապնոնիկ պլևրիտ, պնևմոթորաքս, էմպիեմա:
- Արտաթոքային մետաստատիկ բարդություններ՝ մենինգիտ, պերիկարդիտ, էնդոկարդիտ, օսթեոմիելիտ, սեպտիկ արթրիտ:
- Այլ՝ միոկարդիտ, հեմոլիթիկ-ուրեմիկ համախտանիշ:

*Թոքի թարախակույտ (աբսցես)*. կլինիկորեն նկատվում է առանց այն էլ ծանր ընդհանուր վիճակի վատթարացում, հիվանդների մոտ առաջանում են դողերոցք, հեկտիկ ջերմություն, մաշկի հողազույն երանգավորում, հևոց: Ախտահարման օջախի վրա նկատվում են թոքային հնչյունի կարճացում, շնչառության թուլացում, իսկ դեպի բրոնխ բացվելուց հետո՝ պերկուտոր հնչյունի տիմպանիկ երանգ, ամֆորիկ շնչառություն, թաց խզզոցներ: Ինտոքսիկացիայի նշանները գերակշռում են տեղային արտահայտությունների նկատմամբ: Ռենտգեն հետազոտություն՝ հեղուկի հորիզոնական մակարդակով խոռոչ:

*Ստաֆիլոկոկային դեստրուկցիայի* բշտային (բուլյոզ) ձևն ընթանում ոչ խիստ արտահայտված ինտոքսիկացիայով: Ռենտգեն նկարում նկատվում են կտրուկ արտահայտված եզրերով, փոփոխվող չափերով օդային խոռոչներ: Երբ բուլլան բացվում է պլևրայի խոռոչ, առաջանում է պնևմոթորաքս: Այդ դեպքում ախտահարման կողմում նկատվում են կրծքավանդակի հետ մնալը շնչական ակտից, պալպատոր՝ “ձայնի դողոցի” թուլացում, պերկուտոր՝ տիմպանիկ հնչյուն, աուսկուլտատիվ՝ շնչառության բացակայություն: Երբ պլևրայի խոռոչ է բացվում թարախակույտը, առաջանում է պիոպնևմոթորաքս: Կլինիկորեն այն արտահայտվում է հանկարծակի, շատ սուր արտահայտված ցավերով կրծքավանդակի շրջանում, ինտոքսիկացիայի ուժեղացումով, ի հայտ են գալիս խիստ անհանգստություն, սառը քրտինք, ցավոտ շնչառություն, աճում է շնչառական անբավարարությունը (շնչառությունը՝ բոպետում 80 և ավել), ցիանոզը: Նկատվում են նաև կրծքավանդակի ախտահարված կողմի հետ մնալը շնչառական ակտից, միջկողային տարածությունների հարթումը:



Պերկուտոր՝ միջընդերքի թեքում դեպի առողջ կողմը, պերկուտոր հնչյունի կարճացում: Աուսկուլտատիվ՝ մանր բշտիկային խզզոցներ, պլևրայի քսման աղմուկ: Պերիֆերիկ արյան մեջ՝ լեյկոցիտոզ<sup>a</sup> կտրուկ թեքումով մինչև միելոցիտներ:

*Սուր պլևրիտ.* բնորոշ են ցավերը կրծքավանդակի շրջանում, շնչառական անբավարարությունը, կարճ, ցավոտ հազը: Հիվանդը պառկած է ախտահարված կողմի վրա, որը հետ է մնում շնչական ակտից: Միջկողային տարածությունները հարթված են, “ձայնի դողոցը” բացակայում է: Պերկուտոր՝ ախտահարված կողմում լսվում է բութ հնչյուն: Աուսկուլտատիվ՝ թուլացած շնչառություն, պլևրայի քսման աղմուկ: Պլևրիտները լինում են “սինպնևմոնիկ” և “մետապնևմոնիկ”՝ կախված թե հիվանդության սկզբից են արտահայտվում, թե ի հայտ են գալիս դրա ընթացքում:

### **Միրտ-անոթային խանգարումներ**

Այլ կերպ նախկինում ավանդաբար անվանվել է “կարդիոռեսպիրատոր” համախտանիշ: Այն բնութագրվում է վերջույթների սառնությամբ, մաշկի գունատությամբ, տախիկարդիայով կամ առիթմիայով, սրտի տոների խլացումով, կարող են լինել սրտի սահմանների մեծացում, սիստոլիկ աղմուկ, զարկերակային ճնշման իջեցում: Միաժամանակ նկատվում են հազ և հևոց: Բացի դրանցի կարող է զարգանալ նաև միոկարդիտ, որը կրերի ընդհանուր վիճակի էլ ավելի վատթարացմանը:

### **ԿՆՀ ախտահարում**

ԿՆՀ ընդգրկումը (պատմական, ավանդական անվանումը՝ *նեյրոտոքսիկոզ*) արտահայտվում է հիպերթերմիայով, ուղեղային ընդհանուր խանգարումներով, ներքին օրգան համակարգերի ֆունկցիաների ընկճումով, ջրաաղային, էներգետիկ, թթվա-հիմնային փոխանակության խանգարումներով: Ջարգացման մեջ տարբերում են երկու փուլ: Գրգռման փուլը (հիպերկինետիկ կամ իրիտատիվ) սկսվում է հանկարծակի, արտահայտվում անհանգստությամբ, ջերմության կայուն բարձրացումով 39°C և բարձր: Նկատվում է տախիկարդիա (180 –

220` 1 բույսերում), զարկերակային ճնշման բարձրացում, ռիթմիկ, սակայն հաճախացած մակերեսային շնչառություն, օլիգուրիա: Արգելակման փուլում (սուպրոդ-ադինամիկ) ի հայտ են գալիս ադինամիա, հիպերթերմիա, կլոնիկ և տոնիկ ցնցումներ, գիտակցության խանգարումներ (սուպր կամ կոմա): Զարկերակային ճնշումը` ընկած է, շնչառության ռիթմը խանգարված, նկատվում է բրադիպնոե, Չեյն-Ստոքսյան կամ Բիոտի շնչառություն, կայուն օլիգուրիա կամ անուրիա:

## **Ներանոթային տարածուն մակարդան համախտանիշ**

Արտահայտվում է մաշկի մարմարագույն երանգով, լորձաղանթների և մաշկի ցիանոզով, վերջույթների սառնությամբ, "սուրճի նստվածքով" փսխումներով, ներարկման տեղից արյունահոսություններով: Կարող են լինել նաև աղիքային արյունահոսություններ: Հիպերթերմիան երբեմն փոխվում է հիպոթերմիայով:

## **■ Սուր թոքաբորբի կլինիկական և էթիոլոգիական տարբերակների համառոտ նկարագիր**

Ավանդաբար տարբերվում են սուր թոքաբորբի ընթացքի հետևյալ կլինիկական ձևերը` տիպիկ և ատիպիկ, ըստ տեղակայման, ինչը հայտնաբերվում է ռենտգեն հետազոտությամբ` օջախային, սեզմենտային, բլթային և ինտերստիցիալ:

*Տիպիկ*, տանը զարգացած թոքաբորբերը առաջացնում են կոկերը կամ այլ գրամ դրական մանրէները. դիտվում է տենդ, ինտոքսիկացիա, առկա են տեղային աուսկուլտատիվ փոփոխություններ, երբեմն` ոչ այնքան արտահայտված; ռենտգենով հայտնաբերվում են հոմոգեն շողքեր:

*Ատիպիկ* ընթացքը առաջացնում են միկոպլազման, իլամիդիան, կարող է դիտվել ջերմության բարձրացում, բայց ինտոքսիկացիայի այլ նշանները այդքան էլ արտահայտված չէ: Շողքերը ոչ հոմոգեն են. կարող են լինել տարածուն օջախներ [Таточенко, 2010]:

*Օջախային* թոքաբորբի ծանրությունը կապված է ախտահարման տարածվածությունից: Սկզբում նկատվում են ՄՇԻ-ի նշաններ՝ հետագա 2-3 օրերի ընթացքում թոքերում բորբոքման առաջացմամբ: Հազի բնույթը տարբեր է՝ չոր տանջողից մինչև հաճախ, դժվար արտաբերվող խորխով: Պերկուտոր՝ ախտանիշները ոչ միշտ են արտահայտված: Աուսկուլտատիվ՝ սահմանափակ հատվածներում կոշտ կամ թուլացած շնչառություն, ներշնչման գագաթին՝ օջախային կրեպիտացիա, մանր բշտիկային թաց խզզոցներ, երբեմն կարող են լսվել նաև չոր խզզոցներ: Օջախային թոքաբորբը հազվադեպ կարող է ստանալ նաև ձուլվող բնույթ և առաջացնել թոքերի դեստրուկցիա:

*Սեզմենտային* թոքաբորբը բնորոշվում է մեկ կամ մի քանի սեզմենտների ախտահարումով, կարող է լինել առաջնային կամ երկրորդային: Ձգձգվելու հակում ունի, բուժման նկատմամբ ռեզիստենտ է, կարող է հանգեցնել դեստրուկցիայի, աստելեկտազի, բրոնխեկտազների զարգացմանը:

*Կրուպոզ* (բլթային, լոբար կամ պլևրոպնևմոնիան) առավել հաճախ հանդիպում է հարաբերականորեն բարձր ռեակտիվականություն ունեցող նախա- և դպրոցական հասակի երեխաների մոտ: Նպաստող գործոններից է մրսելը, սկիզբը սուր է, բուռն: Արտահայտվում է դողերոցքով, բարձր կայուն ջերմությամբ, «ժանգանման» խորխով հազով, շնչառական ակտի հետ կապված կրծքավանդակի ցավերով: Պերկուտոր՝ հնչյունի կարճացում կամ բթացում ամբողջ բլթի հատվածում: Աուսկուլտատիվ՝ բրոնխային շնչառություն և կրեպիտացիա: Հնարավոր են էքսուդատիվ պլևրիտի նշաններ:

*Ինտերստիցիալ* թոքաբորբը կապված է թոքի ինտերստիցիալ հյուսվածքի դիֆուզ ախտահարման հետ: Հանդիպում է գերազանցապես նորածին հասակի, թուլացած երեխաների մոտ՝ պլազմոցիստային, միկոպլազմային և վիրուսային ինֆեկցիաների ֆոնի վրա: Բնորոշ են խորացող շնչառական անբավարարությունը և հևոցը (1 րոպեում՝ մինչև 100), ինտոքսիկացիայի նշանները: Պերկուտոր և աուսկուլտատիվ փոփոխությունները սակավ են կամ հաճախ բացակայում են:

## Ըստ էթիոլոգիայի.

*Պնևմոնոկը* առաջացնում է օջախային կամ բլթային թոքաբորբ, հավանական են բարդություններ պլևրայի կողմից:

*Ստրեպտոկոկերը* կարող են առաջացնել ծանր օջախային կամ սեզմենտար թոքաբորբ, երբեմն՝ ինտերստիցիալ, ունեն ձգձգվող ընթացք, լինում են պլևրալ բարդություններ, շատ բնորոշ է ներկրծքային լիմֆադենիտը:

*Ստաֆիլոկոկերով* պայմանավորվում է աբսցեսի, պիոպնևմոթորաքսի զարգացում, ուղեկցվում է բարձր լեյկոցիտոզով:

*Հեմոֆիլային ցուպիկը* առաջացնում է օջախային թոքաբորբ, բարձր տենդ, ուղեկցվում է օտիտով:

*Միկոպլազմային* թոքաբորբը հանդիպում է ավագ երեխաների շրջանում, սկսվում է աստիճանաբար, նկատվում են բարձր ջերմություն՝ հարաբերականորեն քիչ արտահայտված ինտոքսիկացիայի պայմաններում, լսվում են տարածուն մանր բշտիկավոր խզոցներ, արյան պատկերը փոխված չէ, ունի ձգձգվող ընթացք և բուժվում է մակրոլիդներով:

*Պնևմոցիստային* թոքաբորբերը նկատվում են գլխավորապես իմունոդեֆիցիտ ունեցող հիվանդների մոտ: Հիմնականում ախտահարվում է ինտերստիցիումը՝ այն հաստանում է և խանգարում գազերի փոխանակությունը: Դեպքերի մեծ մասում բնութագրական են ծանրագույն շնչառական անբավարարությունը, սակավ կլինիկական պատկերը, ռենտգենաբանորեն՝ երկկողմանի, արմատին հարող և տարածվող դիֆուզ փոփոխությունները:

*Գրամ բացասական* հարուցիչներից հանդիպում են պսևդոմոնասը, պրոթեյը, ադիքային ցուպիկը: Հիմնական առանձնահատկություններից են ներհիվանդանոցային վարակումը, ծանր ինտոքսիկացիան, երկկողմանի ախտահարումը, միևնույն ժամանակ՝ միջին ծանրության շնչառական անբավարարությունը, ինչպես նաև ԷՆԱ արագացումը, պատասխանը ամինոզիկոզիդների կամ մոքսոլակտամների նշանակմանը: Կյանքի առաջին ամիսներին կարող է դիտվել իլամիդիոզ

թոքաբորբ՝ մորից վարակվելու հետևանքով [BTS, 2011; Таточенко, 2010; Баранов, 2009]:

## Բրոնխների օբստրուկցիայի համախտանիշ

Վաղ տարիքի երեխաների շրջանում բրոնխային օբստրուկցիայի տարածվածությունը ներկայումս գնահատվում է շուրջ 20% [Bush et al, 2009]: Ելնելով բազմաթիվ պատճառներից, բրոնխների օբստրուկցիայի տարածվածությունն ունի աճելու միտում ամբողջ աշխարհում, թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում:

Թոքաբորբի ընթացքը կարող է ուղեկցվել բրոնխների օբստրուկցիայի նշանների ի հայտ գալով: ԱՀԿ կողմից 2012 թ. հրապարակված ուղեցույցներում, որպես լրացուցիչ ախտորոշիչ նշան առաջարկվել է տենդի մակարդակը: Երաշխավորվում է չնշանակել հակաբիոտիկ և վարել որպես “սուլոն շնչառություն”՝ եթե առկա է բրոնխոօբստրուկցիա, իսկ ջերմությունը ցածր է 38°C-ից: Նման դեպքերը հարկ է վարել որպես բրոնխիտ, նշանակել բրոնխոլայնիչ և շարունակել երեխայի վիճակի վերահսկողությունը [WHO, 1993, 2012]:

- ⇒ **Սակայն, պետք է հիշել, որ օբստրուկցիայի դեպքերի բացարձակ մեծամասնությունը հանդիպում է ոչ թե թոքաբորբի, այլ բրոնխների պաթոլոգիայի ժամանակ՝ օբստրուկտիվ բրոնխիտ, բրոնխիտլիտ, ասթմա:**

Մի հետազոտությունում, որի ժամանակ գնահատվել են օբստրուկցիայի բոլոր դեպքերը, թոքաբորբի հաճախականությունը կազմել է միայն 5% [Mathews et al, 2001]:

## Թոքաբորբի ձգձգված ընթացք<sup>3</sup>

Սուր թոքաբորբի դրվագը կարող է հանդիսանալ բրոնխների և թոքերի այլ՝ քրոնիկ հիվանդությունների առաջին “ահագանգ”։ Համապատասխանաբար, ձգձգման դեպքում պետք է վերլուծել ընդհանուր կլինիկական պատկերը, պրոցեսի լոկալիզացիան, ըստ ցուցումների հետազոտել երեխային, ներառյալ ռենտգեն, իմուն փորձեր, քրտինքի տեսք, տոմոգրաֆիա, բրոնխոսկոպիա և այլն:

Ձգձգվող, կրկնվող թոքաբորբ կարող են առաջացնել հետևյալ հիվանդությունները.

- մուկովիսցիդոզ,
- ցիլիար դիսկինեզիա,
- բնածին և ձեռքբերովի իմունոդեֆիցիտներ,
- շնչուղիների օտար մարմին,
- ասպիրացիոն համախառնանիշը,
- տուբերկուլոզ,
- սարկոիդոզ,
- թոքերի միկոզ,
- բնածին և ձեռքբերովի բրոնխեկտազներ,
- թոքերի բնածին անոմալիաներ,
- ուռուցքային հիվանդություններ, ներառյալ լեյկոզ, լիմֆոգրանուլեմատոզ,
- ռեթիկուլոհիստիոցիտոզ,
- α-1 հակաթրիպսինի դեֆիցիտ և այլն:

---

<sup>3</sup> Սույն ձեռնարկը հիմնականում վերաբերում է թոքաբորբի սուր դեպքերին, որոնք ավարտվում են ամենաշատը 4-6 շաբաթների ընթացքում:

⇒ Հիվանդության ձգձգման, բուժման անարդյունավետության դեպքում հարկ է հիշել այնպիսի պարզ գործոնների մասին, ինչպիսիք են հակաբիոտիկների ոչ ադեկվատ ընտրությունը, տևողությունը, սխալ դեղաչափը, ծնողների կողմից երեխային դեղորայք չտալը [Nelson, 2011]:

## ■ Գործիքային և լաբորատոր հետազոտություններ

### Ռենտգեն հետազոտություն

Ռենտգեն հետազոտությունը մշտապես դիտարկվել է թոքաբորբի ախտորոշման “ոսկե ստադարտ”։ Սակայն վերջին տասնամյակների ընթացքում վերաբերմունքը ռենտգեն հետազոտության նշանակմանը էապես փոփոխվել է։

Հիվանդանոցային պայմաններում, համաձայն ԱՀԿ նորացված ուղեցույցում, եթե կա ռենտգենի հնարավորություն, ռենտգենը ցուցված է հիվանդանոցում ծանր թոքաբորբով հոսպիտալացված երեխաներին, ինչպես նաև դիագնոզի անճշտության կամ դեպքերի ձգձգման դեպքում [WHO, 2013]:

Հիվանդանոցային պայմաններում կրծքավանդակի ռենտգենը (անհրաժեշտ դեպքերում՝ ներառյալ կողմնային պրոյեկցիայով) ուղղված է հաստատելու ինֆիլտրատի առկայությունը, դրա չափերը, բնույթը, տեղակայումը։ Բացի դրանից, ռենտգենով հնարավոր է բացահայտել թոքային բարդությունների առկայությունը և բացահայտել այնպիսի վիճակներ, որոնք կպահանջեն լրացուցիչ դեղորայքի՝ այլ քան հակաբիոտիկների նշանակումը, բուժում։

Ինչը ձգձգված ընթացքի դեպքերում չափազանց կարևոր է, ռենտգենի առկայությունը թույլ է տալիս հետազայում գնահատել հիվանդության ընթացքը, անհրաժեշտ դեպքերում ճշգրտել բուժումը։ [BTS, 2011; AAP, 2011]:

Որոշ դեպքերում ռենտգեն հետազոտությունը թոքաբորբի ախտորոշման միակ եղանակն է: Թոքաբորբերը կարող են լինել սակավ կլինիկական արտահայտություններով: Վաղ հասակի երեխաների մոտ անհայտ ծագման տենդը, ծանր ինտոքսիկացիան, բարձր լեյկոցիտոզը առանց այլ ակնհայտ պատճառների կարող են հանդիսանալ ցուցում ռենտգեն հետազոտություն իրականացնելու համար [Bachur et al, 1999]:

Փոփոխվել է վերաբերմունքը կրկնակի հետազոտությունների նկատմամբ ապացուցվել է, որ կլինիկական նշանների հետ զարգանալուց հետո ռենտգենի փոփոխությունները կարող են պահպանվել մի քանի շաբաթ: Համապատասխանաբար, ռենտգենի կրկնակի իրականացումը՝ հիվանդության նշանների հետ զարգացման պայմաններում դեպքերի մեծ մասում չի ազդում բուժմանը վերաբերվող որոշման վրա: Այն պետք է իրականացվի այն դեպքերում, երբ երեխայի վիճակը չի բարելավվում բուժումը սկսելուց հետո 48 - 72 ժամում կամ ավելի ուշ, եթե նկատվում է երեխայի վիճակի վատթարացում, առկա է բարդությունների զարգացման կասկած: Բացի դրանից, ռենտգենի կրկնակի իրականացումը 4-6 շաբաթ անց ցուցված է այն դեպքերում, երբ առկա է կրկնակի բորբոքում նույն հատվածում, անոմալիայի կամ օտար մարմնի կասկած [Bradley et al, 2011]:

⇒ **Այսպիսով, ռենտգեն հետազոտությունը հիվանդանոցի պայմաններում ցուցված է հետևյալ դեպքերում.**

- ծանր թոքաբորբի դեպքում, ճշտվում է ինֆիլտրատի առկայությունը, տեղակայումը, չափերը,
- կլինիկական նշանների հակասություն, ախտորոշման դժվարություններ,
- հիվանդության ընթացքի ձգձգում, բուժման նկատմամբ պատասխանի բացակայություն,
- բարդությունների զարգացման կասկած (թարախակույտ, պլերիտ, միոկարդիտ և այլն),
- տուբերկուլյոզի կասկած,



- օտար մարմնի կասկած,
- անամնեստիկ տվյալներից ելնելով՝ թոքերի ձեռքբերովի, բնածին և ժառանգական հիվանդությունների կասկած (մուկովիդոզ, ցիլիար դիսկինեզիա / Կարտագենների համախտանիշ և այլն):

## **Պուլսօքսիմետրիա**

Թոքաբորբի վարման համար առավել կարևոր հետազոտություններից է: Պուլսօքսիմետրիայի մեթոդաբանությունը հիմնվում է օքսիգենացված և վերականգնված հեմոգլոբինների կողմից կարմիր և ինֆրակարմիր սպեկտրների լույսի նկատմամբ պատասխանների տարբերության վրա: Օքսիգենացված հեմոգլոբինը կլանում է գլխավորապես ինֆրակարմիր ճառագայթները (850 – 1000 նմ), իսկ վերականգնված հեմոգլոբինը՝ կարմիր լույսի սպեկտրը (600 – 750 նմ): Օքսիգենացիայի աստիճանը որոշվում է, ելնելով երկու ցուցանիշների հարաբերակցությունից [Aoyagi, 2003]:

Պուլսօքսիմետրիայի ցուցանիշը նորմայում ծովի մակերեսին կազմում է 98-99%, միջին բարձրությունների վրա այն կազմում է 97-98%, իսկ 3000 մ մակարդակի վրա այն նորմայում կազմում է 90%:

Պուլսօքսիմետրիան ներկայումս գնահատվում է, որպես սուր ստորին շնչառական հիվանդություններով տառապող հիվանդի վիճակի գնահատման կարևորագույն միջոց [Mower wt al, 1997]: Պուլսօքսիմետրիան պարտադիր է անբավարարության աստիճանը որոշելու և դրա դինամիկան գնահատելու համար<sup>4</sup>:

Ներկայումս գործող ուղեցույցներում սաստուրացիայի տվյալները, այն է ցուցանիշի իջեցումը 90% [WHO, 2012] կամ 92%-ից [AAP, 2011, BTS, 2011] հանդիսանում է ուղղակի ցուցում հոսպիտալացման և օքսիգենոթերապիայի համար: Պուլսօքսիմետրիան հանդիսանում է նաև հետազայում հիվանդության ընթացքի փոփոխությունը

<sup>4</sup> Պուլսօքսիմետրիայի ցուցանիշի կարևորության մասին խոսում է այն փաստը, որ մասնավորապես, համաձայն ԱՄՆ-ում ներկայումս ընդունված ազգային ուղեցույցի, այն պետք է իրականացվի սուր թոքաբորբով բոլոր հիվանդներին, անկախ նրանից, նրանք բուժվում են տանը, թե հիվանդանոցում [Bradley et al, 2011]:

վերահսկելու կարևորագույն միջոց: Մասնավորապես, ծանր թոքաբորբի դեպքերում հոսպիտալացմանը հաջորդող 12 և 24 ժամերին դրա իրականացումը թույլ է տալիս վաղ ի հայտ բերել սկսված հակաբակտերիալ թերապիայի անարդյունավետությունը և ժամանակին փոխել հակաբիոտիկը [Fu et al, 2006]:

Պուլսոքսիմետր օգտագործելիս պետք է հիշել հետևյալ պարզ սկզբունքերի մասին. երեխան պետք է լինի հնարավորինս չափ հանգիստ վիճակում, պուլսը պետք է հստակ երևա: Պուլսօքսիմետրիայի ցուցանիշի վրա ազդում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են`

- երեխայի մոտ շոկային վիճակի առկայությունը,
- ծանր անեմիան,
- սխալ դիրքը,
- պուլսի անկանոն ռիթմը,
- եղունգների ներկը, մաշկի պիգմենտացիան,
- էլեկտրամագնիսային դաշտերը, ներառյալ բջջային հեռախոսների ազդեցությունը,
- անսովոր հեմոգլոբինների առկայությունը, ինչպիսիք են մետհեմոգլոբինը, կարբոքսիհեմոգլոբինը [Fouzas et al, 2011]:

Մատուրացիայի կայուն ցուցանիշի տվյալը ստանալուն պես այն պետք է ֆիքսվի շուրջ կես րոպեի ընթացքում և պարտադիր գրանցվի հիվանդության պատմության մեջ [BTS, 2011]:

Հարկ է հիշել նաև, որ պուլսօքսիմետրը կարող է հանդիսանալ ներհիվանդանոցային ինֆեկցիայի տարածման աղբյուր, համապատասխանաբար այն պետք է կանոնավոր ախտազերծվի:

⇒ Պոլսօքսիմետրիան իրականացվում է հիվանդանոցային պայմաններում`

- ծայր աստիճան ծանր դեպքում` կենտրոնական ցիանոզ, ուղեղի ախտահարման նշաններ կամ երբ սատուրացիայի ցուցանիշը ցածր է 85% -ից` 2 ժամը մեկ մինչև թթվածնի ցուցանիշի կայունացումը, այնուհետ` ըստ ցուցումների,
- ծանր թոքաբորբի դեպքում` առնվազն 6 ժամը մեկ առաջին օրերին, կախված ծանրությունից,
- թոքաբորբի այլ դեպքերում կամ ծանր թոքաբորբի վիճակի բարելավման դեպքում` առնվազն օրը 2 անգամ մինչև երեխայի վիճակի բարելավումը:

## Էթիոլոգիական ախտորոշում

### Խորխի հետազոտություն

Նախկինում խորխի մանրէաբանական հետազոտության իրականացումը դիտարկվում էր թոքաբորբի ախտորոշման համար նշանակալից և պարտադիր հետազոտություններից մեկը: Ներկայումս էթիոլոգիական ախտորոշումը չի իրականացվում ամբուլատոր պայմաններում դեպքերի բացարձակ մեծամասնությունում [Honda et al, 2000; Nelson, 2011]: Խորխն ունի ստույգ ախտորոշիչ նշանակություն, եթե նմուշը վերցվում է ձայնալարից ստորև ընկած հատվածից, ինչը գործնականում անհնար է դեպքերի մեծ մասում: Ընդ որում, այն թույլ է տալիս հայտնաբերել հարուցիչը ոչ բոլոր դեպքերում, իսկ մանրէաբանական հետազոտության տվյալները հայտնի են դառնում մի քանի օր հետո, երբ այն գործնական նշանակություն գրեթե չունի:

Խորխի հետազոտությունը կարող է իրականացվել հիվանդանոցային պայմաններում բուժվող երեխաների մոտ այն ծանր կամ անհասկանալի դեպքերում, երբ հնարավոր է խորխ վերցնելը [Bradley et al, 2011, AAP 2011]: Հարուցչի հայտնաբերումը կարող է ազդել

վարման տակտիկայի վրա, մասնավորապես հակաբիոտիկի ընտրության առումով: Տվյալ պայմաններում մանրէաբանականից առաջ նմուշը պետք է գնահատվի միկրոսկոպիկ եղանակով: Նմուշի ծագման մասին հնարավոր է մտածել, երբ միկրոսկոպի տեսադաշտում լեյկոցիտների թիվը գերազանցում է 25, իսկ էպիթելիալ բջիջների թիվը չի գերազանցում 10: Այդ պայմաններում ավելի մեծ է հավանականությունը, որ ցանքսում հայտնաբերված հարուցիչը իրականում պատասխանատու է բորբոքման համար:

Բացի վերոհիշյալից, խորխի հետազոտությունը պետք է իրականացվի բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն պատճառներով իրականացվում է բրոնխոսկոպիա: Խորխի հետազոտությունը իրականացվում է նաև այն հիվանդների մոտ, որոնք գտնվում են արհեստական շնչառության տակ, ընդ որում պրոցեսի ձգձգման դեպքում հետազոտությունը պետք է իրականացնել կրկնակի՝ մինչև արհեստական շնչառության ավարտը:

⇒ **Խորխի մանրէաբանական հետազոտությունը հիվանդանոցային պայմաններում իրականացվում է՝**

- եթե երեխան գտնվում է արհեստական շնչառության տակ, ընդ որում ձգձգման դեպքում՝ կրկնակի,
- հնարավորության դեպքում՝ նախկինում երկարատև ընթացքի, ախտորոշման դժվարությունների ժամանակ:

### **Արյան ցանքս**

Արյան ցանքսը չի հանդիսանում ռուտին հետազոտություն և երաշխավորվում է իրականացնել թոքաբորբի ծանր ընթացքի դեպքերում, հատկապես այն հիվանդների մոտ՝ որոնց մոտ առկա է պահպանվող բարձր տենդ կամ առկա են թոքաբորբի բարդություններ [Bradley et al 2011]: Արյան ցանքսը իրականացվում է միայն հիվանդանոցային բուժում պահանջող բարդացած դեպքերում, ընդ որում այն ունի առավել մեծ արժեք այն դեպքերում, եթե դրան նախօրոք հակաբիոտիկ չի նշանակվել [Kuppermann et al, 1999]:

Արտահիվանդանոցային թոքաբորբի դեպքում արյան դրական մանրէաբանական հետազոտության հավանականությունը կազմում է ոչ ավել, քան 2-5%:

### **Վիրուսների հետազոտություն**

Որոշակի նշանակություն ունեն էթիոլոգիայի հայտնաբերմանն ուղղված իմունոֆլուորեսցենտ կամ PCR հետազոտությունները: PCR հետազոտությունը (օրինակ՝ RSV, influenza, parainfluenza հայտնաբերելու համար) թույլ է տալիս հայտնաբերել հարուցիչը մեկ օր հետո, փորձի զգայունությունը կազմում է 90%, յուրահատկությունը՝ 95% [Claas et al, 1993]: Գրիպի կամ այլ վիրուսի հայտնաբերումը կարող է նպաստել հակաբիոտիկ չնշանակելուն՝ եթե բացակայում են այլ մանրէական ինֆեկցիայի նշանները [Bradley et al, 2011]: Հարուցչի առանձնացումը իրապես օգտավետ է, բայց ևս բացարձակ չէ՝ հայտնաբերման ցածր հավանականության առումով, իսկ տեխնիկական և ֆինանսական խնդիրների հետևանքով դրանց հնարավոր չի կիրառել համատարած ռուտին եղանակով:

### **Պլևրայի արտադրուկ**

Էթիոլոգիական ախտորոշումը պարտադիր է պլևրալ խոռոչում բորբոքային էքսուդատի դեպքում իրականացվող միջամտությունների ժամանակ [Bartlett et al, 1998].

### **Արյան ընդհանուր անալիզ**

Լեյկոցիտների մակարդակը արյան մեջ բարձրանում է դեպքերի շուրջ կեսում; մոտ մեկ երրորդում նկատվում է նորմալ մակարդակ, իսկ մնացած դեպքերում թոքաբորբը կարող է ուղեկցվել լեյկոպենիայով [Каганов и др, 1995]: Միայն հարաբերականորեն բարձր լեյկոցիտոզը (> 15 000), որն էլ զուգակցվում է Ց-ռեակտիվ սպիտակուցի բարձր ցուցանիշների հետ, որոշ աստիճանով վկայում է մանրէաային ծագման օգտին [Попович, 2008], թեև այս դրույթը չի հաստատվել մի շարք այլ

հետազոտություններում [Wubbel et al., 1999; Ruuskanen, Mertsola 1999]: Ինչևէ, հիվանդանոցային պայմաններում գտնվող երեխաների մոտ արյան ընդհանուր անալիզը, Ց-ռեակտիվ սպիտակուցի որոշումը իրականացվում է հիվանդության մասին ընդհանուր կլինիկական դատողություն անելու համար [Bradley et al, 2011]: Արյան ընդհանուր անալիզի իրականացումը երաշխավորվում է նաև ԱՀԿ նորացված ուղեցույցով [WHO, 2013]: Արյան բիոքիմիական անալիզը իրականացվում է ծանր վիճակում գտնվող հիվանդի արյան մեջ հիմնական տարրերի (կալիում, նատրիում, կալցիում) խտության, ինչպես նաև լյարդի և երիկամների ֆունկցիոնալ վիճակի գնահատման և բուժման հնարավոր շտկման նպատակով:

- ⇒ Արյան ընդհանուր անալիզ՝ հիվանդանոց ընդունված երեխաներին
- ⇒ Արյան բիոքիմիական անալիզ և այլ հետազոտություններ՝ ծանր դեպքերում և ըստ ցուցումների
- ⇒ Մեզի ընդհանուր անալիզ՝ ըստ ցուցումների:

### **Տուբերկուլինային փորձ**

Համապատասխան անամնեզի և / կամ կլինիկայի առկայության դեպքում թոքաբորբի սուր, առավել ևս՝ ձգձգվող ընթացքի դեպքում պետք է իրականացվի տուբերկուլինային փորձ [WHO, 2013]:

### **Քրտինքի տեսք**

Ձգձգվող ընթացքի դեպքում կարող է քննարկվել քրթինքային փորձի իրականացման հարցը [BTS, 2011]:

### **Գազերի կազմը և թթվա-հիմնային հավասարակշռությունը**

Ծայրահեղ ծանր թոքաբորբերի վարման տեսակետից անհրաժեշտ է վերահսկել նաև այլ գազերի կազմը և թթվա-հիմնային հավասարակշռությունը (աղյուսակ 3): Թոքաբորբի զարգացման առաջին

օրերին նկատվում է ռեսպիրատոր ացիդոզ, այնուհետ հնարավոր է նաև մետաբոլիկ ացիդոզի, և ալկալոզի զարգացում (աղյուսակ 4):

**Աղյուսակ 3. Ջարկերակային արյան գազային կազմը նորմայում**

pH	7,38-7,42
PO <sub>2</sub>	80-100 mm Hg
PCO <sub>2</sub>	35-54 mm Hg
HCO <sub>3</sub>	22-26 mEq/L
Հիմքերի ավելցուկ	-2 +2 mEq/L

**Աղյուսակ 4. Արյան գազային կազմի փոփոխությունները տարբեր իրավիճակների ժամանակ**

	<b>PH</b>	<b>PCO<sub>2</sub></b>	Հիմքերի ավելցուկ
Սուր շնչառական ացիդոզ	↓	↑	↔
Քրոնիկ շնչառական ացիդոզ մետաբոլիկ կոմպենսացիայով	փոքր-ինչ ↓	↑	↑
Սուր մետաբոլիկ ացիդոզ	↓	↓	↓
Սուր մետաբոլիկ ալկալոզ	↑	↓	↑

## ■ Թոքաբորբով հիվանդի վարումը (բուժումը)

### Հոսպիտալացման ցուցումներ

Հայաստանում հոսպիտալացման ցուցումները շարադրված են ըստ ԱՀԿ առաջարկների՝ երկրի համար տեղայնացված և մշակված ՄՀԻՎ ռազմավարության ձեռնարկներում և ՀՀ ԱՆ հրամաններում [WHO, 1995, 2006, 2013]: Այն երաշխավորվում է, եթե երեխայի մոտ առկա են վտանգի նշաններ՝ լեթարգիկ և / կամ քնկոտ վիճակ, ցնցումներ, ծոծրակի մկանների կարկամություն (այն է՝ մենինգիտի կասկած); անգուսպ փսխումներ, խմելու անկարողություն, պայմանավորված շնչական անբավարարությամբ, ծանր շնչառական անբավարարություն, արտահայտված մասնավորապես կրծքավանդակի ստորին հատվածների / էպիգաստրալ ներքաշումներով ներշնչման պահին: Որպես ցուցում դիտարկվում են նաև ծանր ուղեկցող վիճակի առկայությունը, բարդությունների կասկած, ինչպիսիք են խորը թերսնուցումը կամ ծանր սակավարյունությունը:

Այլ ցուցումներից են.

- հոսպիտալացման պարակլինիկական օբյեկտիվ չափանիշներից է արյան ցածր օքսիգենացիան՝ պուլսօքսիմետրիայի ցուցանիշը ցածր է 90%<sup>5</sup>,
- թոքաբորբ, ուղեկցվող խրոնիկական այլ հիվանդությամբ, օրինակ՝ անբավարարությամբ ուղեկցվող սրտի բնածին արատ, ծանր ընթացքով ասթմա, իմունոբորբոքային հիվանդություններ, մանկական ուղեղային կաթված, օրգանիզմի դիմադրողականության վրա էական ազդեցություն ունեցող պաթոլոգիա [BTS, 2011; AAP, 2011]:
- սպեցիֆիկ ծագման ծանր թոքաբորբեր՝ ջրծաղիկ, կարմրուկ, գրիպ և այլն՝ ըստ համապատասխան ուղեցույցների և հրամանների:

<sup>5</sup> ԱՄՆ, եվրոպական երկրներում ընդունված է չափանիշ 92%:



Ռենտգենաբանական ցուցումներ.

- սեզմենտար, պոլիսեզմենտար, բլթային ախտահարում,
- թոքաբորբի բարդություններ կամ դրա կասկած՝ պլերիտ, դեստրուկցիա, միոկարդիտ և այլն,
- օտար մարմնի կասկած,
- տուբերկուլյոզի կասկած<sup>6</sup>:

Բոլոր միջազգային և ազգային հանձնարարականներում որպես հատուկ ցուցում նշվում է ընտանիքի սոցիալական վիճակը՝ երբ տնային պայմաններում բուժման կանոնների պահպանումը կասկածի տակ է դրվում:

**Ծանր թոքաբորբով հիվանդների հոսպիտալացում անհետաձգելի բուժօգնության / ինտենսիվ թերապիայի բաժանմունք (հիվանդասենյակ)**

ՀՀ ԱՆ կողմից հաստատված ուղեցույցներում կան հոսպիտալացման ցուցումներ, ինչպես նաև շտապ տեսակավորման, ախտորոշման և անհետաձգելի բուժման բնութագրերը: Անհետաձգելի վիճակների ախտանշաններով երեխաները կարիք ունեն շտապ բուժման, կանխելու համար մահվան ելքը: Համաձայն ԱՀԿ կողմից առաջարկված ուղեցույցի՝ անհետաձգելի միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ընդունարանում (տեսակավորման բաժանմունքում), որը պետք է հազեցած լինի անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով<sup>7</sup>:

Նման պայմանների բացակայության դեպքում երեխաները պետք է անմիջապես փոխադրվեն հիվանդասենյակ / ինտենսիվ թերապիայի հիվանդասենյակ/ բաժանմունք, ուր առկա է թթվածին տալու հնարավորություն:

<sup>6</sup> Օտար մարմնի կամ տուբերկուլյոզի կասկածի դեպքում ուղեգրում մասնագիտական ստացիոնար:

<sup>7</sup> Հայաստանի հիվանդանոցների մեծամասնությունում նշված բաժանմունքներ / համապատասխան պայմաններ ներկայումս բացակայում են:

Առաջարկվում են հետևյալ ցուցումները անհետաձգելի բուժօգնություն իրականացնելու/ ինտենսիվ թերապիայի հիվանդասենյակ կամ բաժանմունք փոխադրելու համար.

- կոմա, լեթարգիկ վիճակ, գիտակցության կորուստ, անսովոր քնկոտություն,
- ծայր աստիճան թուլություն, երեխան չի կարողանում խմել կամ կուրծք ծծել,
- կրկնվող, ձգձգվող ցնցումներ,
- պարանոցի մկանների կարկամություն, այլ մենինգեալ նշաններ,
- ծանր շնչարգելություն բոլոր օժանդակ մկանների մասնակցությամբ, կամ բրադիպնոե, պարբերական շնչառություն,
